Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում իրականացվող գործողությունների ծրագրերի կատարման գնահատում

«ԵՄ - Հայաստան գործողությունների ծրագրի» իրականացման գնահատում՝ բնապահպանություն և կայուն զարգացում

Աշխ.գիտ.դոկ., Կ.Դանիելյանի ընդհանուր խմբագրությամբ

ՀՏԴ 32 (479.25)
ԳՄԴ 66 (2Հ)
Կ-199

Կ 199 «ԵՄ - Հայաստան գործողությունների ծրագրի» իրականացման գնահատում՝ բնապահպանություն և կայուն զարգացում: Եր., Լուսակն, 2005

Սույն հրատարակությունը պարունակում է բնապահպանության և կայուն զարգացման բնագավառում «ԵՄ - Հայաստան գործողությունների ծրագրի» 2006-2008թթ. իրականացման գնահատման արդյունքները: Գնահատումը իրագործվել է «Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում, և Ուկրաինայում Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրերի իրականացման գնահատում» նախագծի շրջանակներում «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի / UNEP ազգային կոմիտեի կողմից (ՀՀ այլ բնապահպանական ՀԿ-ների փորձագետների մասնակցությամբ), օգտագործելով WWF-EPO և Հայնրիխ Բյոլի հիմնադրամի կողմից մշակած մեթոդաբանությունը:

Աշխ.գիտ.դոկ., Կ.Դանիելյանի ընդհանուր խմբագրությամբ
էկսպերտներ՝ Կ.Դանիելյան, Գ.Առաքելյան, Լ.Սառգսյան, Ա.Եհիազառյան, Ա.Սավադյան, Լ.Օհանյան, Մ.Հակոբյան

Հրատարակությունը պատրաստվել
BST - Black Sea Trust
A project of the German Marshall Fund
ֆինանսական աջակցությամբ:

Կ $\frac{0801000000}{0150(01)\ 2009}$ **2009** ԳՄԴ 66 (2Հ)

ISBN 99930-880-9-9

© «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Նախաբան 4

“ԵՄ – Հայաստան գործողությունների ծրագրի իրականացման գնահատումը” նախագծի արդյունքների ամփոփում …….. 5

ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրի իրականացման գնահատում …….. 8

Հարց 1. Եվրոպական Միության հետ համագործակցության ուժեղացումը …….. 8

Հարց 2. ԵՄ պարտավորությունների մակարդակի գնահատում …….. 14

Հարց 3. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միջազգային համաձայնագրերի և արձանագրությունների վավերացումը …… 17

Հարց 4. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պլանների և ծրագրերի մշակումը … 24

Հարց 5. Օժանդակումը բնապահպանական օրենսդրության ընդունմանը (սեկտորալ մոտեցում - ջուրը) ..... …… 26

Հարց 6. Վարչական կառույցների և պրոցեդուրաների /գործընթացների/ ուժեղացումը …… 33

Հարց 7. Կառույցների և ընթացակարգերի /պրոցեդուրաների/ ուժեղացում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում անցկացնելու համար (բնապահպանական փորձաքննություն)36

Հարց 8. Թույլատրող և իրավակիրառական կառույցների բարելավումը ..... …….. 41

Հարց 9. Տեղեկատվության մատչելիության և հասարակայնության մասնակցության բարելավումը ..... …… 44

Հարց 10. Շրջակա միջավայրի վիճակի մասին կանոնավոր հաշվետվությունների պատրաստում 50

Հարց 11. Աջակցություն քաղաքացիական հասարակությանը և իշխանության տեղական մարմիններին: 51

Հարց 12. Հարևան երկրների հետ համագործակցության ուժեղացումը 54

Հարց 13. Քաղաքականության այլ ոլորտների էկոլոգիական /բնապահպանական/ հարցերի ինտեգրացման ապահովումը (աջակցությունը կայուն զարգացմանը) 58

Հարց 14. Կիոտոյի արձանագրության և Կլիմայի փոփոխման ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացումը) 59

Հարց 15. Էներգետիկ և տրանսպորտային քաղաքականության կայունության բարելավումը ...63

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս ուսումնասիրությունը բնապահպանության և կայուն զարգացման բնագավառում «ԵՄ - Հայաստան գործողությունների ծրագրի» իրականացման գնահատման ուղղությամբ իրագործվել է «Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում, և Ուկրաինայում Եվրոպական հարևանության քաղաքականության /ԵՀՔ/ գործողությունների ծրագրերի իրականացման գնահատում» նախագծի շրջանակներում:

Նախագիծն իրականացվել է «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի / UNEP ազգային կոմիտեի կողմից, Սևծովյան տարածաշրջանային համագործակցության հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ (The Black Sea Trust for Regional Cooperation / a project of the German Marshall Fund/): ԵՀՔ արևելյան երկրներում նախագծի գործընկերներն են «Հասարակություն և շրջակա միջավայր» անալիտիկ – ռեսուրսային կենտրոնը (այս միջազգային նախագծի առաջատար ՀԿ, Ուկրաինա), «էկոլեկս» (Ադրբեջան), «Կանաչ այլընտրանք» (Վրաստան) և «էկո – ՏԻՐԱՍ» (Մոլդովա) ՀԿ–ները: Նախագծի եվրոպական գործընկերներն են Վայրի բնության հիմնադրամի եվրոպական քաղաքականության գրասենյակը (WWF – EPO) և Հենրիխ Բյուլի հիմնադրամը (Բելգիա):

Նախագծի հիմնական խնդիրը Գործողությունների ծրագրի իրականացման անկախ գնահատումը և ստացված արդյունքների քննարկումն է հասարակական կազմակերպությունների, պետական կառույցների ու Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ՝ ընդլայնելու համար հասարակության մասնակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ԵՀՔ գործողությունների ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով:

“ԵՄ – Հայաստան գործողությունների ծրագրի” իրականացման գնահատումը (“Շրջակա միջավայրի պահպանություն” և “Կայուն զարգացում” բաղադրիչների վերաբերյալ) իրագործվել է 2006թ. (նոյեմբեր) – 2008թ. (դեկտեմբեր) ժամանակահատվածի համար փորձագետների հետևյալ խմբի կողմից՝ Գևորգ Առաքելյան, Ալիսա Սավադյան, Լիլիթ Սարգսյան, Մանե Հակոբյան, Արմինե Եդիգարյան, Լիլիթ Օհանյան և Կարինե Դանիելյան: Այս գնահատման համար կիրառվել է Հենրիխ Բյուլի հիմնադրամի և WWF – EPO- ի կողմից մշակված և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործողությունների ծրագրերի իրականացման գնահատման “Եվրոպական քաղաքականության կանաչեցում” ուղեցույցում ներկայացված մեթոդաբանությամբ: Ստացված արդյունքները քննարկվել են Հասարակական բնապահպանական դաշինքի շրջանակներում, 3 հասարակական լսումներում (2 – ը ք. Երևանում և 1 – ը ք. Գյումրիում), ՀԿ – ների, անկախ փորձագետների, ՀՀ նախարարությունների ու ՀՀ Ազգային ժողովի հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի ու Հումանիտար համալսարանի ուսանողների հետ պարապմունքների ընթացքում:

Գործողությունների ծրագրերը կարևորագույն գործիքներ են բնապահպանական, կայուն զարգացման հարցերի լուծման և դրանցում հարևան երկրներում հասարակության մասնակցության մեծացման համար: Այդ պատճառով գործողությունների ծրագրերի իրագործումը հասարակության կողմից կանոնավոր մոնիթորինգի և գնահատման թիրախ է հանդիսանում դրանց իրականացման արդյունավետության բարձրացման և ազգային կարիքների ներառման նպատակով: Անկախ մոնիթորինգն ու գնահատման արդյունքները շահագրգիռ կողմերի համար ինֆորմացիայի կարևորագույն աղբյուր են հանդիսանում գործողությունների ծրագրերում փոփոխությունների ներմուծման, առաջնայնությունների որոշման և դրանց իրագործման պլանների սահմանման դեպքերում՝ առավել հրատապ բնապահպանական խնդիրների ներառման և հասարակության մասնակցության ապահովման հետ կապված հարցերի լուծման համար:

Գնահատման հեղինակները լիահույս են, որ տվյալ հետազոտությունն իր դրական ներդրումը կունենա Հայաստանում Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործման գործընթացում:

ՀՀ –ում նախագծի ղեկավար, տվյալ գնահատման զեկույցի խմբագիր և համահեղինակ, աշխ. գիտ. դոկտոր, “Հանուն կայուն մարդկային զարգացման” ասոցիացիայի / UNEP ազգային կոմիտեի նախագահ՝ **Կարինե Դանիելյան:**

“ԵՄ – Հայաստան գործողությունների ծրագրի իրականացման գնահատումը” նախագծի արդյունքների ամփոփում

Համառոտ ամփոփման մեջ ներկայացված են նախագծի շրջանակներում փորձագիտական հետազոտությունների և քննարկումների արդյունքում ստացված հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները: Աղյուսակ 1- ում բերված թվերն արտացոլում են հանձն առնված պարտավորությունների կատարման ադեկվատության աստիճանը (հաշվումներն իրականացվել են Գնահատման ուղեցույցի հեղինակների կողմից առաջարկված մեթոդով՝ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրավիճակը գնահատվում է 0-ից մինչև 3 բալլերով և ստացված գումարը բաժանվում է տվյալ բաժնի հնարավոր մաքսիմալ գումարային բալերի թվի վրա):

Ինչպես երևում է աղյուսակից, բացառությամբ 10 – րդ բաժնից, գնահատականները բավականին բարձր են: Անհրաժեշտ է նշել, որ հաշվարկի առաջին տարբերակում գնահատականներն էլ ավելի բարձր էին, սակայն, Ուղեցույցի հեղինակներին մեր կողմից ներկայացվեց հետևյալ մեկնաբանությունը.

Ընդհանուր մեկնաբանություն. Հարաբերականորեն բարձր գնահատականները մասնակի պայմանավորված են այն հանգամանքով, որ Հարցաշարում շեշտը դրված է ինստիտուցիոնալացման, այլ ոչ թե պլանների և ծրագրերի իրագործման և “բնության մեջ” ստացված ու պրակտիկայում առկա արդյունքների վրա: Այս մտահոգությունը կապված է հետսովետական պետություններում “իրականացման ճգնաժամի” հայտնի խնդրի հետ: Հնարավոր է, որ կիրառված մոտեցումը ներկա էտապում արդարացված է և առավել իրատեսական պատկերը կուրվագծվի հետագայում, երբ կկիրառվեն “իրագործման ինդիկատորները”:

Տարածաշրջանային սեմինարում այս մեկնաբանության քննարկումից հետո Ուղղեցույցի հեղինակները մի շարք բաժիններում ներառեցին լրացուցիչ հարցեր, կապված պրակտիկայում պլանների, ծրագրերի իրագործման և օրենսդրության կիրարկման հետ: Այս կապակցությամբ բալլերի գումարը 828,2 – ից նվազեց մինչև 784,1, իսկ միջին բալլը 59,2 – ից նվազեց մինչև 56,0: Կարծում ենք, որ նմանատիպ նվազումը առավել ցայտուն կլիներ, եթե Ուղղեցույցի բաժիններից շատերում ներառվեին համապատասխան հարցեր:

Աղյուսակ 1. Գնահատման ընդհանրացված արդյունքները

Հարցաշարի բաժինը	Մակարդակը տոկոսներով
1. Եվրամիության հետ համագործակցության ուժեղացում	52,1%
2. Եվրամիության պարտավորությունների մակարդակի գնահատում	40,0%
3. Միջազգային բնապահպանական կոնվենցիաների և արձանագրությունների վավերացում	--*
4. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պլանների ու ծրագրերի մշակում	64,1%
5. Աջակցություն բնապահպանական օրենսդրության ընդունմանը (սեկտորալ մոտեցում - ջուր)	75,1%
6. Ադմինիստրատիվ կառույցների ու ընթացակարգերի ուժեղացում	61,5%
7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակով համակարգերի ու ընթացակարգերի ուժեղացում (բնապահպանական փորձաքննություն)	56,7%
8. Թույլատրող և իրավակիրառական կառույցների կատարելագործում	55,6%
9. Տեղեկատվության մատչելիության և հասարակության մասնակցության բարելավում	52,6%

10. Շրջակա միջավայրի իրավիճակի մասին կանոնավոր զեկույցների պատրաստում	0
11. Աջակցություն քաղաքացիական հասարակությանը և տեղական իշխանության մարմիններին	66.7 %
12. Հարևան երկրների հետ համագործակցության ուժեղացում	55,5 %
13. Քաղաքականության այլ ոլորտներ բնապահպանական դրույթների ինտեգրման ապահովում (աջակցություն կայուն զարգացմանը)	61,1%
14. Կիոտոյի արձանագրության և կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ –ի կոնվենցիայի դրույթների իրականացում	80,0%
15. Էներգետիկ և տրանսպորտային քաղաքականության կայունության բարելավում	61,5%

* Ծանոթություն: ՀՀ համար տվյալ բաժինը հնարավոր չէ ադեկվատ գնահատել, քանի որ մեր երկիրը Ուղեցույցում նշված կոնվենցիաներից մեծ մասին միացել է Գործողությունների ծրագրի հաստատումից առաջ, ինչն Ուղեցույցում հաշվի չի առնվում:

Ներկայացված գնահատումների արդյունքում կարելի է գալ հետևյալ եզրահանգումների

1. Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ ԵՀՔ -ի /ENP/ շրջանակներում գործունեությունն իրականացվում է նվազ կամ առավել հաջող, իրոք՝

• ՀՀ – ում հիմնական անհրաժեշտ ռազմավարական քաղաքական փաստաթղթերն ընդունվել են, և մեր երկրում Եվրոպական քաղաքականության իրականացման պրոցեսի ինստիտուցիոնալ աջակցությունն ապահովված է:

• ՀՀ կողմից ստորագրված և վավերացված են շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող եվրոպական կոնվենցիաների մեծ մասը (և դրանց համապատասխան արջանագրությունները), որոնց կատարման համար մշակվել են համապատասխան գործողությունների ազգային ծրագրեր, պարբերաբար կազմվում են հաշվետվություններ և ներկայացվում կոնվենցիաների քարտուղարություններին, ինչպես նաև երկրի հասարակությանը:

• Մշակվել և հաստատվել է երկրորդ Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագիրը /ՇՄՊԳԱԾ – 2-ը/, որի գաղափարախոսությունն ու սկզբունքները համապատասխանում են “ԵՄ–Հայաստան գործողությունների ծրագրում” շարադրված հենակետերին և պահանջներին:

• ՀՀ օրենսդրությունը բավականաչափ համահունչ է ԵՄ իրավունքի սկզբունքներին ու տերմինաբանությանը:

• Երկրում բնապահպանական ինֆորմացիայի մատչելիությունը բավականաչափ ապահովված է (ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ ձևով); դրանում կարևորագույն օգնություն է ցուցաբերում Օրհուս – կենտրոնների ձևավորված ընդարձակ ցանցը:

• Հայաստանը ներգրավված է մեծ թվով եվրոպական պրոցեսների մեջ. “Շրջակա միջավայր Եվրոպայի համար”, “Շրջակա միջավայրը և անվտանգությունը”, “Կրթությունը հանուն կայուն զարգացման” (Վիլնյուսյան շրջանակներ), ինչպես նաև տարածաշրջանային (ՌԷԿ – Կովկաս), երկկողմ (Վրաստանի և Իրանի հետ) և բնապահպանության բնագավառում այլ նախաձեռնություններ:

• Սկսել է գործել ՀՀ Վարչապետին առընթեր Կայուն զարգացման խորհուրդը, Կառավարության կողմից ՀԿ–ների մասնակցությամբ մշակվել և հաստատվել է ՀՀ կայուն զարգացման ծրագիրը:

2. Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է “ԵՄ – Հայաստան գործողությունների ծրագրի” կոնտեքստում նշել որոշ բացասական կողմեր և թերություններ.

- Մի շարք դեպքերում պրոցեսներն իմիտացիոն բնույթ են կրում, իրականում հաճախ դիտվում է հետխորհրդային երկրներից շատերին յուրահատուկ մշակված պլանների ու ծրագրերի “իրականացման ճգնաժամ”:
- Օրենսդրությունը պրակտիկայում թույլ է իրագործվում, իրավական նիհիլիզմը հատկապես բնութագրական է բնապահպանական բնագավառի համար:
- Կայուն զարգացման (ԿԶ) սկզբունքների սեկտորալ ինտեգրումը առայժմ թույլ է իրականացվել ինչպես ԿԶ ծրագրում, այնպես էլ (հատկապես) պրակտիկայում:
- Շրջակա միջավայրի մասին ազգային զեկույցների (SoE) նախապատրաստումը կանոնավոր – պարբերական բնույթ չի կրում:
- Բնապահպանական կարևորագույն լուծումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցությունը որոշ չափով ապահովվում է, սակայն, միաժամանակ հասարակության ազդեցությունը խիստ սահմանափակ է:

3. Կետ 2 –ում նշված բացասական պրոցեսների և թերությունների հիմնական օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, մեր կարծիքով, կայանում են հետևյալում՝
- Անցումային շրջանի ռեֆորմների ոչ ադեկվատ լինելը, որոնց սոցիալ – տնտեսական ծախքերը, ինչպես պարզվեց, ահռելի եղան և հանգեցրին երկրում ընդհանուր առմամբ ծանր իրավիճակի:
- Անցումային շրջանի քաղաքական – տնտեսական ռեֆորմների արդյունքում երկրում ձևավորված ֆեոդալական հարաբերությունների տարրեր պարունակող “վայրի, օլիգարխիկ կապիտալիզմին” յուրահատուկ քաղաքական ու սոցիալական հարաբերությունները, որոնք անհամատեղելի են ժողովրդավարության, այդ թվում և “բնապահպանական ժողովրդավարության“ սկզբունքներին:
- Գիտատեխնիկական մեծ ներուժի կորուստը (“ուղեղների արտահոսք”):
- Երկրում, հատկապես մայրաքաղաքում, հակաէկոլոգիական քաղաքաշինության քաղաքականության իրականացումը՝, զուտ շուկայական պահանջարկի ուղորդվածությամբ, արհամարելով քաղաքաշինական, հատկապես բնապահպանական նորմերը:
- Միջազգային շուկա ներգրավման հետ մեկտեղ, երկրի ուղորդումը ինտենսիվ ընդերքօգտագործման ուղղությամբ (առավելապես բաց եղանակով, շրջակա միջավայրի զգալի աղտոտումով), բնապահպանական տեսակետից առավել վտանգավոր քիմիական և այլ արտադրությունների վերականգնումն ու զարգացումը, այսինքն, այն պրոցեսների զարգացում, որոնք սկզբունքորեն հակասում են ԿԶ սկզբունքներին:

Հաշվի առնելով վերը շարադրածը, կարելի է եզրահանգել հետևյալ առաջարկություններին.

1. Հրաժարվել բնապահպանության և կայուն զարգացման բնագավառում իմիտացիոն քաղաքականությունից:
2. Ձգտել հաղթահարել “իրականացման ճգնաժամը”, առավելագույնս իրագործել մշակված ծրագրերն ու պլանները:
3. Հաղթահարել իրավական նիհիլիզմը մեր երկրում, որն առավել յուրահատուկ է բնապահպանական բնագավառին:
4. ՀՀ տնտեսական զարգացման մեջ շեշտադրումը լեռնահանքարդյունահանման արդյունաբերությունից տեղափոխել այլ, հռչակվող, սակայն, պրակտիկայում թույլ իրագործվող ուղղությունների վրա (գիտատար ինովացիոն արտադրություններ, գիտության առևտրայնացում, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսություն, տուրիզմ, հատկապես էկոտուրիզմ և այլն):
5. Ինտենսիվացնել երկրի ժողովրդավարացման գործընթացը ընդհանրապես և “բնապահպանական ժողովրդավարացման” զարգացումը, մասնավորապես. Բարձրացնել հասարակայնության մասնակցության էֆեկտիվությունը, բնապահպանական կարևորագույն լուծումների վրա հասարակության ռեալ ազդեցությանը հասնելու նպատակով:
6. Բարձրացնել պետության կարգավորիչ դերը՝ զարգացման գործընթացների էկոլոգիական և սոցիալական ուղղվածության ապահովման, կայուն զարգացման սկզբունքների սեկտորալ ինտեգրման նպատակով:

Գնահատման զեկույցի խմբագիր և համահեղինակ, նախագծի ղեկավար՝
Կարինե Դանիելյան

ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագրի իրականացման գնահատում

Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները կարգավորվում են ԵՄ-ՀՀ գործընկերության և համագործակցության համաձայնագրով, որն ստորագրվել է 1996 թ. և ուժի մեջ է մտել 1999 թ.: Եվրամիության ընդլայնման հետ կապված ԵՄ նախաձեռնեց Եվրամիության հարևանության քախաքականություն /ENP-ԵՀՔ/, և Հայաստանը ընդգրկվեց այդ քաղաքականության իրականացմանը: 2005 թ. մարտ ամսին ստորագրված ԵՀՔ աշխատանքային ծրագիրը քննարկվել է Հանձնաժողովի և ՀՀ կառավարության կողմից և վերջնականորեն ընդունվել է 2006 թ. նոյեմբերի 14-ին:

Հայաստան-Եվրամիություն Գործընկերության և Համագործակցության համաձայնագիրը առավելագույնս կարող է նպաստել բնապահպանական ոլորտում Հայաստանի համագործակցության ընդլայնմանը Եվրամիության և նրա անդամ երկրների հետ, առավել ևս, որ Եվրոպական Հանձնաժողովի կողմից բնապահպանական խնդիրներին տրվում է գերակա նշանակություն:

Հարց 1. Եվրոպական Միության հետ համագործակցության ուժեղացումը

Հարցը	այո			ոչ	ծանոթագրություններ
	գերազանց	լավ	բավարար		
Գնահատականը	3	2	1	0	
քաղաքականություն					
Ընդունվե՞լ է արդյոք քաղաքական հռչակագիր ԵՄ հետ համագործակցության, ինտեգրման մասին:	X				Հայաստանի քաղաքական դիրքորոշումներն ու տնտեսական քաղաքականությունն այսօր ուղղված են եվրոպական ինստիտուտներին ինտեգրվելու և եվրոպական շուկա-ներ մուտք գործելու նպատակին: Հայաստանի և ԵՄ միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը (ԳՀՀ) ուժի մեջ է մտել 2000 թվականի հուլիսի 1-ից: ԳՀՀ-ի առանցքային նպատակը Հայաստանում շուկայական տնտեսության ձևավորումն է: Այս նպատակին հասնելու համար պետք է մշակվեն և իրականացվեն «խաղի կանոնների» փաթեթ՝ օրենքներ, կանոնակարգեր, վարքագծի նոր-մեր և փորձ: 2006թ. մարտի 23-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ԳՀՀ իրականացման նպատակով Ազգային ծրագիրը, որի ընդունմամբ էլ ՀՀ կառավարությունը պարտավոր-վում է իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն հզորացնել երկրի ընդհանուր զարգացումը և ճանապարհ հարթել դեպի Եվրամիություն՝ օգտագործելով ԵՄ անդամակցության մեթոդաբանությունը: 2006թ. նոյեմբերի 14-ին Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության հետ

					կնքել է Եվրոպական հարևա-նության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակ-ներում Գործողություններ-ի ծրագիր (ԳՕ), որի հիման վրա հետագայում մշակվեցին տարեկան միջոցառում-ների ծրագրերը:
Ընդունվե՞լ է արդյոք ռազմավարական ինստրումենտ՝ /մեխանիզմ/ գործողությունների ծրագրի իրականացման համար: Եթե այո, ապա ունի՞ այն նորմատիվային-իրավական ակտի կարգավիճակ:	**X**				2007թ. հուլիսի 19-ին ՀՀ կառավա-րությունը N 927-Ն որոշմամբ հաս-տատել է այդ նույն թվականի հու-նիսի 26-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի և Եվրո-պական հարևանության քաղաքակա-նության իրականացման շրջանակնե-րում ՀՀ - ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007թ. ընթացքում իրականացվելիք առաջ-նայնությունների և միջոցառումների ցանկը: Փաստացի 2007թ. միջոցա-ռումների ծրագրով էլ սկսվել է ԵՀՔ ԳՕ իրականացումը:
Ընդգրկու՞մ են արդյոք օրենսդրական (նորաստեղծ) աշխատանքի պլանները[1)] գործողությունների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրության ընդունումը: Եթե այո, ապա նախատեսվու՞մ են արդյոք հստակ ժամանակային սահմաններ:		**X**			Համաձայն ԳՀՀ իրականացման ազգային ծրագրի, որը նպատակ է հետապնդում 1999 թվականին ուժի մեջ մտած Գործընկերության և հա-մագործակցության համաձայնա-գրով ստանձնած պարտավորություն-ների համաձայն կազմակերպել է իրավական համապատասխանեց-ման և ինստիտուցիոնալ ու վարչա-կան կարողությունների զարգացման համապատասխան գործընթացները: Չնայած որ դեռևս լուծված չեն Եվրամիության ինտեգրմանն ուղղ-ված՝ ՀՀ ու Եվրոպական համայնք-ների և դրանց անդամ պետություն-ների միջև գործընկերության և համա-գործակցության մասին Համաձայ-նագրի իրականացման 2006-2009թ.թ. ազգային ծրագրի կատարման համար հատկացվող ֆինանսավորման հարցերը:
Համապատասխան նախա-րարությունների աշխատան-քային պլանները ընդգրր-կո՞ւմ են, արդյոք, քայլեր՝ գործողությունների ծրագրի իրականացման համար: Եթե այո, ապա ունե՞ն նրանք հստակ ժամանակային սահմաններ:		**X**			Այո, «ՀՀ կառավարության տարեկան գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» որոշումներն են
Քաղաքականություն իրականացում /գլխավոր ասպեկտներ/					
Իրականացվու՞մ են			**X**		Գործնականում հստակ չեն

[1)] Օրենսդրական (նորմաստեղծ) աշխատանքի պլանները ընդգրկում են պառլամենտի աշխատանքային պլանը և կառավարության կամ համապատասխան նախարարությունների աշխատանքային պլանների այն բաժինները, որոնք վերաբերում են նոր նորմատիվային փաստաթղթերի կամ եղածներում փոփոխությունների մշակմանը:

գործնականում ընդունված փաստաթղթերը:					իրականացվում:
Մատչելի՞ են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները և, արդյոք, էֆեկտիվ են դրանք բաշխված:			X		Դրանց բաշխումը ոչ հավասարաչափ է, թե ինչով է դա պայմանավորված և ինչ սկզբունքով է կատարվում ֆինանսական ռեսուրսների բաշխումը դժվար է ասել, մի բան պարզ է՝ ամենաանտեսվածը այդ տեսակետից բնապահպանությունն է:
Գոյություն ունե՞ն մոնիտորինգի մեխանիզմները և օգտագործվում են դրանք իրականացման հետագա գործընթացի նկատմամբ:			X		Մոնիտորինգը կատարվում է հասարակական սեկտորի կողմից, ըստ ոլորտների: Նաև կազմվում են հաշվետվություններ, որոնք ներկայացվում են նախագահին, վարչապետին և հմապատասխան վերահսկող խարհրդներին:
Ինստիտուցիոնալ հարցեր					
Ունի՞, արդյոք, Արտաքին գործերի նախարարությունը առանձին բաժին ԵՄ հետ համագործակցության-ինտեգրման գծով:[2)]		X			ՀՀ Արտաքին Գործերի նախարարությունում կա համապատասխան բաժին, որն զբաղվում է ԵՄ - Հայաստան համագործակցության գործընթացով, սակայն ԳՀՀ շրջանակներում գործում են ՀՀ-ԵՄ Համագործակցության Խորհուրդ, ՀՀ-ԵՄ համագործակցության Կոմիտե, որի հայկական կողմի համանախագահն է ՀՀ էկոնոմիկայի նախարարը (ՀՀ կառավարության 20.03.-2000թ. N 128 որոշում) և ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտեն, որի հայկական կողմի համանախագահն է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալը:
Անցե՞լ են պետական ծառայողները թրենինգ ԵՄ հետ համագործակցության – ինտեգրման հարցերի շուրջ:		X			Այո, սակայն ոչ լիարժեք ընդգրկումով:
Կառավարությունը հասարակայնությանը տրամադրո՞ւմ է արդյոք տեղեկատվություն ԵՄ հետ համագործակցության քաղաքականության և գործունեության մասին:		X			Հեռուստատեսությամբ, լրատվամիջոցների օգնությամբ և Կառավարության կայքերով: Հանրային հեռուստատեսությունում գործող “Խորհրդարանային ժամ” ծրագրով և լուրերի թողարկումներով: Ակտիվ են նաև հասարակական կազմակերպությունները և միջազգային կազմակերպությունները, որոնք տեղեկատվություն են տեղադրում ինտերնետային կայքերում և կազմակերպում հեռուստահաղորդաշարեր, հանձինս Ե1 հեռուստա-

[2)] Գնահատականը հիմնվում է այդ բաժնի լիազորությունների փորձագիտական գնահատականի վրա:

					ընկերությանը:
Կառավարությունը կանոնավորապես և պաշտոնապես անցկացնո՞ւմ է, արդյոք, Գործողությունների ծրագրի կատարման մոնիտորինգ:		**X**			Տարեկան հաշվետվությունների մակարդակով, որը ներկայացնում են համապատասխան նախարարությունները: 2008թ. հունիսից ՀՀ Նախագահին առընթեր գործում է հանձնաժողով, որը կոչված է հետևել ԵՄ-ի հետ կապված փաստաթղթերի իրականացմանը: Նմանատիպ խորհուրդ ստեղծվել է նաև ՀՀ Վարչապետին առընթեր, ուր ներգրավված են և ՀԿ-ներ:
Համագործակցությունը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում					
Եթե ընդունվել է Գործողությունների ծրագիրի իրականացման քաղաքական ինստրումենտ /մեխանիզմ/, ապա ընդգրկո՞ւմ է այն կոնկրետ գործողություններ և ժամանակային սահմաններ՝ շրջակա միջավայրի պահպանման բնագավառում նպատակների հասնելու համար:		**X**			Այո, ԳԾ-ում ընդգրկված են հետևյալ դրույթները. **Առաջնային ոլորտ 3**. Խթանել հետագա տնտեսական զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում, այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը: ***4.6.4 Բնապահպանություն*** *Միջոցներ ձեռնարկել բնապահպանության լավ կառավարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար և սկսել դրանց կիրառումը.* - ուժեղացնել վարչական կառույցները և ընթացակարգերը՝ բնապահպանությանը առնչվող խնդիրների ռազմավարական ծրագրավորումը, ինչպես նաև համապատասխան մասնակիցների միջև համակարգումն ապահովելու նպատակով, սահմանել ընթացակարգեր - բնապահպանական տեղեկատվության մատչելիության և հասարակայնության մասնակցության վերաբերյալ, այդ թվում կիրառելով Օրհուսի կոնվենցիան, - պատրաստել կանոնավոր հաշվետվություններ շրջակա միջավայրի վիճակի մասին, - ամրապնդել շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման կառույցներն ու գործառությունները, - ստեղծել հաղորդակցական ռազմավարություններ բնապահպանության քաղաքականության առավելությունների մասին, աջակցել քաղաքացիական հասարակու-

					թյան դերակատարներին և տեղական իշխանություններին: Միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի վատթարացումը կանխարգելելու, մարդու առողջու-թյան պաշտպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման ուղղությամբ՝ Յոհանեսբուրգի գագաթաժողովի շրջանակ-ներում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան. - մշակել օրենսդրություն և հիմնական ընթացակարգեր ու ապահովել բնապահպանության համակարգի առանցքային ոլորտների պլանավորումը, ներառելով մասնավորապես, բնապահպանական ազգային գործողությունների ծրագրում սահմանված ոլորտները (հստակեցնել բնագավառները. դրանք, օրինակ, կարող են ընդգրկել օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը և բնության պաշտպանությունը), - ամրապնդել վարչական կարողությունները, ներառյալ թույլտվությունների հատկացման, ինչպես նաև իրականացման և վերահսկման համար, - շարունակել մշակել և իրականացնել առկա ազգային ծրագրերը և նախագծերը կենսաբազմազանության և հատուկ պահպանվող տարածքների, ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման, թափոնների կառավարման, անապատացման դեմ պայքարի ոլորտներում: *Բնապահպանության հարցերում համագործակցության բարելավում.* - կլիմայի փոփոխության վերաբերյալ Կիոտոյի արձանագրությամբ և ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով սահմանված դրույթների կենսագործում, - ապահովել ակտիվ մասնակցություն Եվրամիության Ջրային նախաձեռնության ծրագրի մաս կազմող Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի ենթածրագրում, - վավերացնել Շրջակա միջավայրի մասին ՄԱԿ- ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) շրջանակներում համա-

					պատասխան կոնվենցիաները, - սահմանել հարևան պետությունների հետ տարածաշրջանային սերտ համագործակցության հնարավորությունները, մասնավորապես ջրային ոլորտում, - հնարավոր մասնակցություն Եվրոպական բնապահպանական գործակալության առանձին ծրագրերում:
Օրենսդրական աշխատանքի պլանները նախատեսու՞մ են, արդյոք, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող Գործողությունների ծրագրիի նպատակների իրականացման համար անհրաժեշտ օրենսդրության ընդունումը:		**X**			Այո, սակայն դեռևս ոչ լիարժեք ծավալով:
Նախատեսո՞ւմ է, արդյոք, Բնապահպանության նախարարության աշխատանքային խումբը օրենսդրության ընդունում, որն անհրաժեշտ է Գործողությունների ծրագրի էկոլոգիական նպատակների իրականացման համար:		**X**			Ազգային ծրագրի ընդունմամբ ՀՀ կառավարությունը պարտավորվում է իրականացնել մի շարք բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն հզորացնել երկրի ընդհանուր զարգացումը և ճանապարհ հարթել դեպի Եվրամիություն՝ օգտագործելով ԵՄ անդամակցության մեթոդաբանությունը:
Իրականացվու՞մ են գործնականում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ընդունված փաստաթղթերը:			**X**		-
Մատչելի՞ են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները Գործողությունների ծրագրի շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վերաբերյալ և, արդյոք, էֆեկտիվ են դրանք բաշխված:				**X**	
Գոյություն ունե՞ն մոնիտորինգի մեխանիզմները և օգտագործվում են դրանք շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ծրագրերի իրականացման հետագա գործընթացի նկատմամբ:			**X**		
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	**25** [0 – 48]				
Տոկոս	**52,1%**				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 2. ԵՄ պարտավորությունների մակարդակի գնահատում

Հարցը	այո			ոչ	ծանոթագրություններ
	գերազանց	լավ	բավարար		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Քաղաքացիական հասարակության աջակցումը Եվրոպական Միության կողմից					
Որքանո՞վ է Եվրոպական Միությունը ակտիվ՝ քաղաքացիական հասարակության գործողություններին աջակցելու և փոխադարձ հարաբերությունների մեջ: Մասնավորապես, ձեր գործունեության ընթացքում պատվիրակության աշխատակիցները հեշտորեն մատչելի՞ էին արդյոք և պատրա՞ստ էին կիսվելու տեղեկատվությամբ:[1] Ստեղծվե՞լ է արդյոք Եվրոպական Միության ընդլայնման հնարավորությունների համակարգ և տեղեկացման մեխանիզմներ քաղաքացիական հասարակության համար:	**X**				Հայաստանի Հանրապետությունը պետական և հասարակական մակարդակներով մասնակցում է մի շարք Եվրոպական տարածաշրջանային բնապահպանական գործընթացների, ուր ԵՎրամիությունը ակտիվ դերակատար է, այդ թվում՝ «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» և «Շրջակա միջավայր և առողջություն»: ՀՀ -ն ակտիվորեն մասնակցել է «Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրանական Ասիայի երկրների էկոլոգիական ռազմավարության» մշակմանը, որը հաստատվել է 2003թ.: Հայաստանը հանդիսանում է Կովկասի տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնի (Կովկասի ՏԷԿ) հիմնադիրներից մեկը: Առկա են 12 Օրհուս կենտրոն: Ակտիվ տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում AEPLAC-ը, “Եվրոպական իտեգրացիա” ՀԿ-ն, WWF-ի Հայաստանյան գրասենյակը:
Որքանո՞վ է Եվրոպական Միությունը ակտիվ քաղաքացիական հասարակությանը ներգրավելու ծրագրեր, հաշվետվություններ և այլն պատրաստելու և ընդունելու գործում:		**X**			
Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքները /ԵՀԳԳ՞					
ԵՀԳԳ շրջանակներում ֆինանսավորվող նախագծերը արտացոլո՞ւմ են արդյոք երկրի կարիքները Գործողությունների ծրագրում բնապահպանական հարցեր ներգրավե-				**X**	Դեռևս լուծված չեն *Եվրամիության ինտեգրմանն ուղղված՝ ՀՀ և Եվրոպական համայնքների և դրանց անդամ պետությունների միջև*

[1] Առաջին երկու հարցերի պատասխանները կգնահատվեն գնահատումն անցկացնող փորձագետի հայեցողությամբ՝ հենվելով զանազան կոնսուլտացիաների վրա: Այդուհանդերձ սուբյեկտիվիզմի ինչ-որ մակարդակ առկա կլինի, քանի որ տարբեր շահագրգիռ մարդկանց կարծիքները կարող են տարբեր լինել:

[2] Ի հակակշիռ հաջորդ հարցի, գնահատում անցկացնող փորձագետը պետք է նկատի ունենա ոչ միայն էկոլոգիական նախագծերը, այլև նախագծերն ընդհանրապես, ներառյալ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությամբ: Վերլուծությունը պետք է հաշվի առնի նախագծերը, որոնք երկրի համար

լու նպատակով:[2)]					*գործընկերության և համագործակցության մասին Համաձայնագրի իրականացման 2006-2009թ.թ. ազգային ծրագրի* կատարման համար հատկացվող ֆինանսավորման հարցերը:
ԵՀԳԳ-ի [1]ֆինանսավորած բնապահպանական նախագծերը գործողությունների ընթացիկ տարեկան ծրագրին համապատասխան արտացոլո՞ւմ են,[2] արդյոք, բնապահպանական առաջնայնությունները, որոնք երկիրը հաստատել է Գործողությունների ծրագրով իրականացնելու համար:				X	“ -- “
ԵՀԳԳ-ի շրջանակներում բնապահպանական նախագծերի ֆինանսավորման բաշխումը արտացոլու՞մ է երկրի ծրագրերին համապատասխան Գործողությունների պլանի բնապահպանական նպատակների կարևորությունը:				X	“ -- “
Բնապահպանական նախագծերի համար ԵՀԳԳ-ի ֆինանսավորումը մատչելի՞ է, երկրի քաղաքացիական հասարակության համար: Եթե այո, ապա այն արդյո՞ք հեշտորեն է մատչելի (օրինակ, գրանտների չափերը և լրացուցիչ ֆինանսավորումը, ընթացակարգը և այլն):				X	“ -- “
Շրջակա միջավայրի Եվրոպական գործակալության գործունեությունը					
Աջակցո՞ւմ է արդյոք ԵՄ (ներառյալ ֆինանսական օգնությունը) տարածաշրջանի մասնակցությանը շրջակա միջավայրի Եվրոպական գործակալության գործունեությանը: Եթե այո, ապա երկիրը օգուտ ստանո՞ւմ է արդյոք այդ ծրագրից (օրինակ, հնարավորությունների ընդլայնում, տվյալների հավաքում):			X		Ֆինանսական կողմը պարզաբանված չէ:
Երկկողմ համագործակցություն					
Գոյություն ո՞ւնի, արդյոք, երկկողմ համագործակցություն ԵՄ անդամ-պետությունների և երկրի միջև՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:		X			Այո, սակայն ցանկալի է ընդլայնել այդ համագործակցությունը:
Եթե այո, ապա անդամ-պետությունների ֆինանսավորված նախագծերը արդյոք արտացոլու՞մ են երկրի		X			Այո, արտացոլում են:

ֆինանսավորվում են ԵՀՔ ծրագրով, անդրսահմանային համագործակցության ծրագրերը և տարածաշրջանային ծրագրերը, որոնցից օգտվում է երկիրը:

[1] Պատասխանը պետք է հաշվի առնի ավանդը երկրի ծրագրերի, անդրսահմանային համագործակցության և տարածաշրջանային ծրագրերի, որոնցից օգտվում է երկիրը: Տե՛ս «Բազային տեղեկատվություն»:

[2] Այս հարցի պատասխանները պետք է գնահատվեն փորձագետի սեփական հայեցողությամբ՝ հենվելով ԵՀՔ-ի շրջանակներում ֆինանսավորման ծրագրավորմանը վերաբերող մատչելի տեղեկատվության վրա:

կարիքները՝ Գործողությունների ծրագրերում բնապահպանական խնդիրներ ներգրավելու նպատակով:					
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	**12** [0 -30]				
Տոկոս	**40,0 %**				
Մեկնաբանություններ և բացատրություններ					
Բազային տեղեկատվություն					
ԵՀԳԳ-ի ֆինանսավորման ո՞ր մասն է առանձնացվել բնապահպանական նախագծերի համար՝ նախորդ տարեկան ծրագրի համապատասխան:	Դեռևս լուծված չեն Եվրամիության ինտեգրմանն ուղղված՝ ՀՀ և Եվրոպական համայնքների և դրանց ան-դամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության մասին Համաձայնագրի իրականաց-ման 2006-2009թ.թ. ազգային ծրագրի կատարման համար հատկացվող ֆինանսավոր-ման հարցերը:				
ԵՀԳԳ-ի ֆինանսավորման ո՞ր պլանավորված մասն է բնապահպանական նախագծերի համար՝ գործող տարեկան ծրագրի համապատասխան:	“ -- “				
Բնապահպանական նախագծերը, որոնցից երկիրը օգուտ է ստացել ԵՄ տարեկան ծրագրի համապատասխան և նրանց արժեքը: Եթե հնարավոր է, բաժանել համապատասխանորեն ըստ երկրի ծրագրի, տարածաշրջանային ծրագրերի և անդրսահմանային համագործակցության ծրագրերի:[5)]	2007թ. ընթացքում իրակա-նացվել են մոտ 28 ազգային (շուրջ 7.653 մլն. ԱՄՆ դոլարի արժողությամբ) և 12 տարածաշրջանային ծրագրեր (շուրջ 773 հազ. ԱՄՆ դոլարի արժողությամբ):				
Նույնպիսի տեղեկատվություն, ինչպես և նախորդ պունկտում, բայց գործող տարեկան ծրագրին վերաբերող:					
Շրջակա միջավայրի վրա պոտենցիալ բացասական ազդեցություն ունեցող նախագծերը ԵՀԳԳ-ի նախորդ տարեկան ծրագրի համապատասխան և նրանց արժեքը: Եթե հնարավոր է, վերաբաշխել համապատասխանորեն ըստ երկրի ծրագրի, տարածաշրջանային ծրագրի և անդրսահմանային համագործակցության ծրագրի:					
Նույնպիսի տեղեկատվություն, ինչպես և նախորդ պունկտում, բայց գործող տարեկան ծրագրին վերաբերող:					
Բնապահպանական նախագծեր նախորդ տարվա ծրագրին և					

[5)] Նախագծերի թվարկումը կարող է սպառիչ չլինել, բայց օրինակները միշտ կարող են օգտակար լինել ձեր կարծիքի պաշտպանության համար:

շրջակա միջավայրի ու բնական պաշարների կայուն կառավարման թեմատիկ ծրագրին համապատասխան, ներառյալ էներգետիկան (ENRTR): Նրանց արժեքը:[6)]	
Նույնպիսի տեղեկատվություն, ինչպես և նախորդ պունկտում, բայց գործող տարեկան ծրագրին վերաբերող:	
Օգտվո՞ւմ է արդյոք երկիրը հնարավորությունների ընդլայնման և տեխնիկական օգնության ծրագրերից (օրինակ, TAIEX, Twinning, մասնակցությունը Շրջակա միջավայրի Եվրոպական գործակալության գործունեությանը) երկրում բնապահպանական խնդիրները լուծելու նպատակով:	Համագործակցությունը “TAIEX և Twinning” ծրագրերը ակտիվ գործընթացի փուլում են:

Հարց 3. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի միջազգային համաձայնագրերի և արձանագրությունների վավերացումը

Հարևան երկրների հետ երկկողմանի համաձայնագրերը դիտարկվում են հարց 12-ում:

Հարցաշարերում ներկայացված միջազգային համաձայնագերի վերաբերյալ պետք է նշել, որ դրանք բոլորը ստորագրվել և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից մինչև ԵՀՔ Գործողությունների ծրագրի հաստատումը: Տվյալ ծրագրի հաստատումից հետո /2006 թ. / Հայաստանի կողմից վավերացվել է միայն «Վայրի բնության պահպանության մասին» Կոնվենցիան, որը սակայն բացակայում է թվարկված ցանկում: Այսպիսով փորձագիտական թիմը որոշում է ընդունել այնուամենայնիվ անդրադառնալ թվարկված միջազգային համաձայնագրերի վերաբերյալ հարցաշարի լրացմանը, սակայն չհաշվարկել գնահատականը, քանզի այն չի կարող համապատասխանել ներկայացված պայմաններին և կլինի արհեստականորեն խիստ նվազեցված:

1. The Convention on Long-Range Trans-boundary Air Pollution and its eight protocols
ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին»
2. Protocol of Heavy Metals
«Ծանր մետաղների մասին» արձանագրություն,
3. Protocol on Persistent Organic Pollutions
Կայուն օրգանական աղտոտիչների մասին» արձանագրություն,
4. Protocol on Abate Acidification, Eutrophication and ground- level Ozone
«Թթվայնացման, էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի դեմ պայքարի մասին» արձանագրություն:

Հարցը	այո			ոչ	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Միջազգային համաձայնագրի ընդունումը					
Վավերացվե՞լ է համաձայնագիր-արձանագրությունը Գոր-	**X**				**1** -վավերացվել է 21. 02. 1997 թ. **2,3** - ստորագրվել են 14.12.

[6)] Նախագծերի թվարկումը կարող է սպառիչ չլինել, բայց օրինակները միշտ կարող են օգտակար լինել ձեր կարծիքի պաշտպանության համար:

ծողությունների ծրագրի ստորագրման պահից:					1998 թ. **4**- ստորագրվել է 30. 11 1999 թ.
Եթե ոչ, ապա ձեռնարկե՞լ է Կառավարությունը քայլեր, որպեսզի արագացնի վավերացումը:[3]				**X**	
Միջազգային համաձայնագրերի իրականացումը					
Ընդունվել կամ փոփոխվե՞լ է օրենսդրությունը, որպեսզի իրականացվի միջազգային համաձայնագրերի պահանջ-ները: Եթե այո, ապա դա համապատասխան ձևով ար-տացոլո՞ւմ է համաձայնագրով նախատեսված պարտավորու-թյունները:				**X**	
Արվե՞լ են, արդյոք» այլ քայլեր միջազգային համաձայնագիրը իրականացնելու համար:		**X**			ՇՄՊ գործողությունների ծրագ-րով 2009-2012 թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է ԵՏՀ-ի նշյալ կոնվենցիայի և դրա արձանա-գրություններով կարգավորվող վնասակար նյութերի արտանե-տումների կադաստրի կազմում:
Գոյություն ունի՞ երկրում միջազգային համաձայնագրի իրականացման մասին հաշ-վետվության համակարգ: Եթե այո, ապա երկիրը արդեն հաշվետու եղե՞լ է միջազգային համաձայնագրի իրականաց-ման մասին:		**X**			Տվյալ կոնվենցիան չի նախա-տեսում ֆինանսական աջակ-ցություն վավերացրած երկրնե-րի համար՝ հետևաբար չի նա-խատեսվում ազգային զեկույց-ների պատրաստում: Հայաստանը պարբերաբար ներկայացնում է որոշակի տվյալներ Կոնվենցիայի քարտուղարությանը:
Իրավասու կառույցը (համա-գործակցող անձը) ունի՞, արդյոք, բավարար ռեսուրսներ և ձեռնհասություն, որպեսզի ձեռնարկի համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ:				**X**	
Միջազգային համաձայնագրերի ընդհանուր հարցեր					
Վերցրե՞լ է իր վրա երկիրը պարտավորություններ՝ վավե-րացնել այլ էկոլոգիական համաձայնագրեր, բացի Գոր-ծողությունների ծրագրում հիշատակվածներից:				**X**	
Ճանաչվե՞լ է երկիրը այն-պիսին, որը չի հետևում որևէ միջազգային համաձայնագրի, մասնավորապես, համաձայ-	**X**				Ոչ

[3] Այս պրոցեդուրան տարբեր է յուրաքանչյուր երկրում, այն կարգավորվում է ազգային մակարդակով: Կարևոր է գնահատել, թե ռատիֆիկացիայի պրոցեդուրայի որ ստադիայում է գտնվում երկիրը: Դա կարող է ներառնել ռատիֆիկացման օրենքների նախագծերը, պառլամենտ ներկայացնելը, քննարկումները պառլամենտական կոմիտեներում և այլն:

նագրի օրգանների կողմից:					
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):					
Տոկոս					
Մեկնաբանություններ և բացատրություններ					

1. The Convention on Environmental Impact Assessment in a Trans-boundary Context (Espoo, 1991)
ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին Կոնվենցիա /Էսպոո1991 /
2. Protocol on Strategic Environmental Assessment (Kiev, 2003)
«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն /Կիև 2003/

Հարցը	այո			ոչ	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Միջազգային համաձայնագրի ընդունումը					
Վավերացվե՞լ է համաձայնագիր-արձանագրությունը Գործողությունների ծրագրի ստորագրման պահից:	**X**				1 -վավերացվել է 21.02. 1997թ., 2 - ստորագրվել է 21. 05. 2003թ.
Եթե ոչ, ապա ձեռնարկե՞լ է Կառավարությունը քայլեր, որպեսզի արագացնի վավերացումը:[4]					
Միջազգային համաձայնագրերի իրականացումը					
Ընդունվել կամ փոփոխվե՞լ է օրենսդրությունը, որպեսզի իրականացվի միջազգային համաձայնագրերի պահանջները: Եթե այո, ապա դա համապատասխան ձևով արտացոլո՞ւմ է համաձայնագրով նախատեսված պարտավորությունները:			**X**		"Բնապահպանական փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ներառում է բնապահպանական փորձաքննության, շրջակա միջավայրի վրա ազդեցության ու ստրատեգիական էկոլոգիական գնահատումների գործընթացների կանոնակարգում՝ միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխան: Այն մշակվել է ՀԿ-ների և ՀՀ Բնութնախի կողմից, սակայն առ այսօր չի ներկայացվել ՀՀ Ազգային Ժողով:
Արվե՞լ են, արդյոք» այլ քայլեր միջազգային համաձայնագիրը իրականացնելու համար:		**X**			ՇՄՊԳ-ի գործողությունների ծրագրով 2008-2010 թթ. ՄԺՕՕ-ով նախատեսվում է մշակված օրենքի նախագծից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակում:
Գոյություն ունի՞ երկրում		**X**			Տվյալ կոնվենցիան չի

միջազգային համաձայնագրի իրականացման մասին հաշվետվության համակարգ: Եթե այո, ապա երկիրը արդեն հաշվետու եղե՞լ է միջազգային համաձայնագրի իրականացման մասին:					նախատեսում ֆինանսական աջակցություն վավերացրած երկրների համար՝ նետևաբար չի նախատեսվում ազգային զեկույցների պատրաստում: Հայաստանը պարբերաբար ներկայացնում է որոշակի տվյալներ Կոնվենցիայի քարտուղարությանը
Իրավասու կառույցը (համագործակցող անձը) ունի՞, արդյոք, բավարար ռեսուրսներ և ձեռնհասություն, որպեսզի ձեռնարկի համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ:				**X**	
Միջազգային համաձայնագրերի ընդհանուր հարցեր					
Վերցրե՞լ է իր վրա երկիրը պարտավորություններ՝ ռատիֆիկացնել այլ էկոլոգիական համաձայնագրեր, բացի Գործողությունների ծրագրում հիշատակվածներից:				**X**	
Ճանաչվե՞լ է երկիրը այնպիսին, որը չի հետևում որևէ միջազգային համաձայնագրի, մասնավորապես, համաձայնագրի օրգանների կողմից:				**X**	

The Convention on the Trans-boundary Effects of Industrial Accidents (Helsinki, 1992)
ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա /Հելսինկի 17.03.1992 թ. /

Հարցը	այո			ոչ	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Միջազգային համաձայնագրի ընդունումը					
Վավերացվե՞լ է համաձայնագիր-արձանագրությունը Գործողությունների ծրագրի ստորագրման պահից:	**X**				վավերացվել է 21. 02. 1997 թ. .
Եթե ոչ, ապա ձեռնարկե՞լ է Կառավարությունը քայլեր, որպեսզի արագացնի վավերացումը:[5]					
Միջազգային համաձայնագրերի իրականացումը					
Ընդունվել կամ փոփոխվե՞լ է օրենսդրությունը, որպեսզի իրականացվի միջազգային համաձայնագրերի պահանջ-				**X**	

ները: Եթե այո, ապա դա համապատասխան ձևով արտացոլո՞ւմ է համաձայնագրով նախատեսված պարտավորությունները:					
Արվե՞լ են, արդյոք» այլ քայլեր միջազգային համաձայնագիրը իրականացնելու համար:		X			2006 թ, Գերմանիայի կառավարության կողմից ֆինանսավորվել է “Արագ արձագանքման մեխանիզմների մշակում ” ծրագիրը : 2008 –ին Գերմանիայի նախարարության կողմից ֆինանսավորվում է հասարակության իրազեկման բարձրացման ծրագիր
Գոյություն ունի՞ երկրում միջազգային համաձայնագրի իրականացման մասին հաշվետվության համակարգ: Եթե այո, ապա երկիրը արդեն հաշվետու եղե՞լ է միջազգային համաձայնագրի իրականացման մասին:		X			Հայաստանը պարբերաբար ներկայացնում է որոշակի տվյալներ Կոնվենցիայի քարտուղարությանը:
Իրավասու կառույցը (համագործակցող անձը) ունի՞, արդյոք, բավարար ռեսուրսներ և ձեռնհասություն, որպեսզի ձեռնարկի համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ:				X	
Միջազգային համաձայնագրերի ընդհանուր հարցեր					
Վերցրե՞լ է իր վրա երկիրը պարտավորություններ՝ վավերացնել այլ էկոլոգիական համաձայնագրեր, բացի Գործողությունների ծրագրում հիշատակվածներից:				X	
Ճանաչվե՞լ է երկիրը այնպիսին, որը չի հետևում որևէ միջազգային համաձայնագրի, մասնավորապես, համաձայնագրի օրգանների կողմից:					Ոչ, չի ճանաչվել

The Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters (Aarhus, 1998)
ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առընչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա /Օրհուս /

Հարցը	այո			ոչ	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Միջազգային համաձայնագրի ընդունումը					
Վավերացվե՞լ է համաձայնագիր-արձանագրությունը Գործողությունների ծրագրի	X				վավերացվել է 14. 05. 2001 թ.

ստորագրման պահից:					
Եթե ոչ, ապա ձեռնարկե՞լ է Կառավարությունը քայլեր, որպեսզի արագացնի վավերացումը:[6]					
Միջազգային համաձայնագրերի իրականացումը					
Ընդունվել կամ փոփոխվե՞լ է օրենսդրությունը, որպեսզի իրականացվի միջազգային համաձայնագրերի պահանջ-ները: Եթե այո, ապա դա համապատասխան ձևով ար-տացոլո՞ւմ է համաձայնագրով նախատեսված պարտավորու-թյունները:				**X**	Բնապահպանությունը կարգավորող որոշ ՀՀ օրենքներում ամրագրված է հասարակության մասնակցությունը /օր. ՀՀ ջրային օրենսգիրք, ՀՀ օրենք Քաղաքաշինության մասին և այլն/:
Արվե՞լ են այլ քայլեր միջազգային համաձայնագիրը իրականացնելու համար:		**X**			Իրականացվել են մի շարք ծրագրեր
Գոյություն ունի՞ երկրում միջազգային համաձայնագրի իրականացման մասին հաշ-վետվության համակարգ: Եթե այո, ապա երկիրը արդեն հաշվետու եղե՞լ է միջազգային համաձայնագրի իրականաց-ման մասին:	**X**				Հայաստանը պարբերաբար ներկայացնում է զեկույցներ Կոնվենցիայի քարտուղարությանը, որոնք քննարկվում են նաև հասարակության կողմից:
Իրավասու կառույցը (համա-գործակցող անձը) ունի՞, ար-դյոք, բավարար ռեսուրսներ և ձեռնհասություն, որպեսզի ձեռնարկի համաձայնագրի իրականացման համար ան-հրաժեշտ միջոցներ:	**X**				Երկրում ստեղծվել են 12 Օրհուս կենտրոնեներ, որոնք զգալիորեն աջակցում են գործընթացին:
Միջազգային համաձայնագրերի ընդհանուր հարցեր					
Վերցրե՞լ է իր վրա երկիրը պարտավորություններ՝ վավե-րացնել այլ էկոլոգիական համաձայնագրեր, բացի Գործողությունների ծրագրում հիշատակվածներից:				**X**	
Ճանաչվե՞լ է երկիրը այնպ-իսին, որը չի հետևում որևէ միջազգային համաձայնագրի, մասնավորապես, համաձայ-նագրի օրգանների կողմից:				**X**	

1. The Convention on the Protection and Use of Trans-boundary Watercourses and International Lakes (Helsinki, 1992)

ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա /Հելսինկի 1992/ Ինչ վերաբերվում է ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիային /Հելսինկի 1992/, ապա, հաշվի առնելով, որ վերջինս չի

ստորագրվել Հայաստանի կողմից, հարցաշարի հիմնական վանդակները չեն լրացվել և այլ մեկնաբանություններ չեն տրվել:

2. Protocol on Water and Health (London, 1999)

«Ջրի և առողջության մասին» արձանագրություն /Լոնդոն 1999/

3. Protocol on Civil Liability (Kiev, 2003)

«Քաղաքացիական պատասխանատվության մասին» արձանագրություն /Կիև 2003/

Հարցը	այո			ոչ	**Ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Միջազգային համաձայնագրի ընդունումը					
Վավերացվե՞լ է համաձայնագիր-արձանագրությունը Գործողությունների ծրագրի ստորագրման պահից:				**X**	1 – չի ստորագրվել 2.ստորագրվել է 17. 06. 1999 թ. 3. ստորագրվել է 21.05.2003թ.
Եթե ոչ, ապա ձեռնարկե՞լ է Կառավարությունը քայլեր, որպեսզի արագացնի վավերացումը:[7]			**X**		2. ներկայացված է վավերացման ենթակա պայմանագրերի ցանկում
Միջազգային համաձայնագրերի իրականացումը					
Ընդունվել կամ փոփոխվե՞լ է օրենսդրությունը, որպեսզի իրականացվի միջազգային համաձայնագրերի պահանջները: Եթե այո, ապա դա համապատասխան ձևով արտացոլո՞ւմ է համաձայնագրով նախատեսված պարտավորությունները:			**X**		ՀՀ ջրային օրենսգրքում ամրագրված է “աղտոտողն է վճարում” սկզբունքը
Արվե՞լ են, արդյոք այլ քայլեր միջազգային համաձայնագիրը իրականացնելու համար:			**X**		Հայաստանը դիմել էր Կոնվենցիայի քարտուղարությանը առաջարկությամբ ` ստորագրել վերապահումներով, սակայն առաջարկությունը մերժվել է :
Գոյություն ունի՞ երկրում միջազգային համաձայնագրի իրականացման մասին հաշվետվության համակարգ: Եթե այո, ապա երկիրը արդեն հաշվետու եղե՞լ է միջազգային համաձայնագրի իրականացման մասին:					
Իրավասու կառույցը (համագործակցող անձը) ունի՞, արդյոք, բավարար ռեսուրսներ և ձեռնհասություն, որպեսզի ձեռնարկի համաձայնագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ:					

[7] Այս պրոցեդուրան տարբեր է յուրաքանչյուր երկրում, այն կարգավորվում է ազգային մակարդակով: Կարևոր է գնահատել, թե ռատիֆիկացիայի պրոցեդուրայի որ ստադիայում է գտնվում երկիրը: Դա կարող է ներառնել ռատիֆիկացման օրենքների նախագծերը, պառլամենտ ներկայացնելը, քննարկումները պառլամենտական կոմիտեներում և այլն:

Միջազգային համաձայնագրերի ընդհանուր հարցեր					
Վերցրե՞լ է իր վրա երկիրը պարտավորություններ՝ վավերացնել այլ էկոլոգիական համաձայնագրեր, բացի Գործողությունների ծրագրում հիշատակվածներից:					
Ճանաչվե՞լ է երկիրը այնպիսին, որը չի հետևում որևէ միջազգային համաձայնագրի, մասնավորապես, համաձայնագրի օրգանների կողմից:					
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):					
Տոկոս					
Մեկնաբանություններ և բացատրություններ					Հստակ գնահատել հարց 3-ը դժվար է

Հարց 4. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պլանների և ծրագրերի մշակումը

4.6.4 Բնապահպանություն

- մշակել օրենսդրություն և հիմնական ընթացակարգեր ու ապահովել բնապահպանության համակարգի առանցքային ոլորտների պլանավորումը, ներառելով մասնավորապես, բնապահպանական ազգային գործողությունների ծրագրում սահմանված ոլորտները (հստակեցնել բնագավառները. դրանք, օրինակ, կարող են ընդգրկել օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը և բնության պաշտպանությունը),

Հարցը	այո			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Նախապատրաստումը և ընդունումը					
Պատրաստվե՞լ են արդյոք համապատասխան պլաններ և ծրագրեր Գործողությունների ծրագիրն ընդունելուց հետո:	**X**				ՀՀ Բնապահպանության Նախն կողմից մշակված և ՀՀ Կառավարության կողմից հաստատված "ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների 2-րդ ազգային ծրագիրը" /ՇՄՊԳԱԾ/ 2008-2012թթ. համար: Նշված ծրագիրը բնապահպանության ոլորտի մոտակա 5 տարվա հիմնաքարն է, ծրագրի մեջ մանարամասն ներկայացված են բոլոր անհրաժեշտ գործողությունները, ըստ ենթաոլորտների: 1998-2002 թթ. ՇՄՊԳ -1 ազգային ծրագրի ընդունումից հետո մշակվել

					են մի շարք ռազմավարական փաստաթղթեր, որոնք ևս կազմում են ՇՄՊԳԱԾ- 2-ի անբաժանելի մաս: ՇՄՊԳԱԾ 2-ի մեջ, որպես գործողություն նախատեսված է Երևան քաղաքի բնապահպանական ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը:
Այդ պլաններն ու ծրագրերը ընդունվե՞լ են պաշտոնապես նախարարության կամ կառավարական մակարդակով:	**X**				Հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից 14.08.08թ.:
Գործընթացը					
Տարբեր ոլորտների նախարարությունները, օրինակ տրանսպորտի, արդյունաբերության, էներգետիկայի, առողջապահության, ակտիվ դեր խաղու՞մ են պլանների և ծրագրերի պատրաստման մեջ: Մասնավորապես, պլանների և ծրագրերի մշակման գործում արդյո՞ք կարևոր դեր է խաղում Բնապահպանության նախարարությունը:	**X**				ՇՄՊԳ-ի 2-րդ ազգային զեկույցը մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի/ UNDP/ աջակցությամբ: Զեկույցի մշակման գործընթացին ակտիվերեն ներ են գրավվել ՀՀ առողջապահության, էներգետիկայի, արդյունաբերության և այլ նախարարություններ:
Պլանների և ծրագրերի պատրաստման գործում ակտիվ դեր խաղու՞մ են տեղական և տարածաշրջանային իշխանությունները:			**X**		Որպես գործողություն ՇՄՊԳ 2-ի մեջ նախատեսված է հետևյալը՝ "ՀՀ մարզերի և համայնքների բնապահպանական գործողությունների ծրագրերի մշակման համար սկզբունքների և ձևաչափի սահմանում": Սակայն անմիջապես մշակման գործընթացին տեղական և տարածքային մարմինները ներգրավված չեն եղել:
Քաղաքացիական հասարակությունը ակտիվ դեր խաղո՞ւմ է տարբեր ոլորտներում (էկոլոգիական ՀԿ-ներ , արդյունաբերողներ և այլն):	**X**				ՇՄՊԳԱԾ 2-ի մշակման և քննարկման գործընթացին մասնակցել են մի շարք ՀԿ-ներ:
Բովանդակությունը					
Պլանները և ծրագրերը հստակորեն որոշո՞ւմ են իրենց կատարման համար պատասխանատվության բաշխումը:	**X**				ՇՄՊԳԱԾ- 2-ի մեջ հատուկ նշված է ամեն գործողության կատարման պատասխանատու մարմինը:
Պլանները և ծրագրերը պարունակու՞մ են հստակ և իրական ֆինանսական պլան, որը որոշում է ռեսուրսները, պահանջները և նրա ճշգրիտ կատարման ուղիները:	**X**				ՇՄՊԳԱԾ- 2-ի մեջ հատուկ նշված է ամեն գործողության ֆինանսավորման աղբյուրը՝ պետական բյուջե /ՄԺԾԾ/, ծրագրային և միջազգային ֆինանսավորում:
Որոշո՞ւմ են պլաններն ու ծրագրերը գործողությունների առաջնայնությունները:	**X**				

Նախատեսո՞ւմ են պլաններն ու ծրագրերը մոնիտորինգի և գնահատման մեխանիզմներ:				X	
Ստեղծվա՞ծ է մոնիտորինգի համակարգը: Եթե այո, ապա օգտագործվու՞մ է այն:			X		
Իրականացումը					
Իրականացվում են Պլանով նախատեսված առաջնահերթ գործողությունները:			X		
Մայլեր արվա՞ծ են պլանները և ծրագրերը իրականացնելու ուղղությամբ:			X		
Նախատեսված ռեսուրսները բաշխվա՞ծ են				X	
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	**25 [0-39]**				
Տոկոս	64,1%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 5. Օժանդակումը բնապահպանական օրենսդրության ընդունմանը (սեկտորալ մոտեցում - ջուրը)

4.6.4 Բնապահպանություն

Միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի վատթարացումը կանխարգելելու, մարդու առողջության պաշտպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման ուղղությամբ՝ Յոհանեսբուրգի գագաթաժողովի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան.

Մշակել օրենսդրություն և հիմնական ընթացակարգեր ու ապահովել բնապահպանության համակարգի առանցքային ոլորտների պլանավորումը, ներառելով մասնավորապես, բնապահպանական ազգային գործողությունների ծրագրում սահմանված ոլորտները (հստակեցնել բնագավառները. դրանք, օրինակ, կարող են ընդգրկել օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը և բնության պաշտպանությունը), շարունակել մշակել և իրականացնել առկա ազգային ծրագրերը և նախագծերը կենսա□ազմազանության և հատուկ հսկվող տարածքների, ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման, թափոնների կառավարման, անապատացման ոլորտներում:

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
ԵՄ օրենսդրությանը ադապտացիայի պլանավորում					
Ընդունվե՞լ է արդյոք անհրաժեշտ նոր օրենսդրությունը կամ մտցվե՞լ են փոփոխություններ արդեն գոյություն ունեցող օրենսդրության մեջ:			X		ԵՀՔ շրջանակներում մշակված ԳՕ-ով առաջնայ-նությունները ըստ ոլորտների հաստատվել են N 927-Ն հուլիսի 19-ի 2007 թ. ՀՀ կառավարության որոշմամբ:

					Այս որոշման 4.6.4 Բնապահպանություն գլուխը սահմանել է, որ ՇՄՊԳԱԾ-ի մեջ պետք է ներառվեն սահմանված ոլորտների համար “նոր օրենքների և ընթացակարգերի մշակումը”: Հիմնվելով ԳԾ-ի մեջ նախատեսված առանձին ոլորտների համար մանրամասն օրենսդրական վերլուծության և առաջարկություններին օրենքները և ընթացակարգերը պետք է մշակվեն, հիմնվելով ԵՄ ոլորտային կանոնակարգերի սկզբունքների վրա:
Որոշվե՞լ են արդյոք պատշաճ մակարդակով ԵՄ համապատասխան օրենսդրության հիմնական սկզբունքներն ու հատկանիշները:	**X**				2006 թ. AEPLAC կազմակերպության կողմից ԳՀՊ-ի շրջանակներում իրականացվել է բնապահպանության ենթաոլորտների իրավական ակտերի մանրամասն վերլուծություն, որն էլ հետագայում ներառվել է ԳԾ-ի մեջ:
Անցկացվե՞լ է արդյոք համապատասխան ազգային օրենսդրության և ինստիտուցիոնալ հարցերի պատշաճ վերլուծություն՝ նպատակ ունենալով որոշելու, թե որքանով են նրանք ընդգրկում ԵՄ իրավունքի սկզբունքներն ու հատկանիշները:	**X**				Վերընշյալ ծրագրի շրջանակներում վերլուծվել է ՀՀ օրենսդրությունը և ԵՄ կանոնակարգերը: Տրվել են առաջարկություններ ՀՀ իրավական ակտերի փոփոխման և նորերի մշակման ուղղությամբ՝ հաշվի առնելով ԵՄ կանոնակարգերի սկզբունքները:
Անցկացվե՞լ է արդյոք իրականացման համար անհրաժեշտ միջոցների տնտեսական գնահատական:			**X**		Տրված առաջարկությունների իրականացման համար տրվել է մոտավոր ֆինանսական գնահատում մարդ/օր չափանիշներով:
Օրենսդրության և օրենսդրական նախագծերի բովանդակությունը					
Որոշվե՞լ են արդյոք հստակորեն բոլոր տերմինները ԵՄ իրավունքի սահմանումներին համապատասխան:	**X**				Կատարված իրավական վերլուծության մեջ ներառված է նաև ԵՄ կանոնակարգերի և ՀՀ իրավական ակտերի սահմանումների վերլուծությունը, վերջիններիս իրար համապատասխանությունն ու հակասությունը:
Որոշվե՞լ են հստակորեն նրանց իրավունքներն ու պարտականությունները, ում նկատմամբ կիրառվում է օրենսդրությունը:	**X**				
Արդյոք չե՞ն հակասում մեկը մյուսին օրենսդրության տարբեր դրույթներ:			**X**		ՀՀ բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ առկա են որոշակի հակասություններ:
Չե՞ն հակասում արդյոք օրենսդրության դրույթները ուրիշ				**X**	

նորմատիվային-իրավական ակտերի դրույթներին (օրինակ, շրջակա միջավայրի պահպանման շրջանակային (ՐՈ-мՏփվօռ) օրենքին:					
Եթե հակասում են, ապա ընդունվե՞լ կամ պատրաստվե՞լ են ընդունման անհրաժեշտ փոփոխություններ:					
Եթե օրենսդրության լրիվ իրականացումը պահանջում է ենթաօրենսդրական ակտերի ընդունում, ապա նախատեսվո՞ւմ է արդյոք, որ այդպիսի միջոցներ կձեռնարկվեն ժամանակին:			**X**		ՀՀ օրենքների կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակումն ու ընդունումը ներառվում է համապատասխան ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տարեկան միջոցառումների ծրագրի մեջ:
Ջրային ռեսուրսների պահպանման և օգտագործման օրենսդրություն					
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը ավազանային մոտեցում:	**X**				ՀՀ ՋՕ հոդված 10-ը ամրագրում է ջրավազանային կառավարման մարմինների ստեղծման գաղափարը:
Հստա՞կ է որոշվել գետային ավազանի շրջանների սահմանման պրոցեսը:	**X**				Այո
Հաստատվե՞լ են արդյոք գետային ավազանի շրջանները:					N 5-Ն 10.06.2003թ. ՀՀ վարչապետի որոշումը սահմանում է գետավազանային կառավարման բաժինների ցանկը և գործունեության կանոնակարգը, իսկ N1749-Ն 09.12.2004թ. կառավարության որոշումը սահմանում է գետավազանային տարածքները:
Նախատեսվա՞ծ են պատշաճ վարչական մեխանիզմներ գետային ավազանի յուրաքանչյուր շրջանի համար:	**X**				Այո, նախատեսված են:
Պատշաճ մակարդակով ապահովվա՞ծ է արդյոք կոորդինացիան համապատասխան օրգանների միջև:	**X**				5 ջրավազանային կառավարման մարմինները կազմված են ՀՀ ԲՆ ՋՌԿԳ կողմից և նրանց գործունեությունը համակարգվում է վերջինիս կողմից:
Գոյություն ունե՞ն արդյոք համապատասխան պրոցեդուրաներ և կառուցվածքներ այլ երկրների հետ համագործակցելու համար, երբ գետային ավազանի շրջանները դուրս են գալիս երկրի տարածքի սահմաններից:					Հայ-Թուրքական համաձայնագիր /Խորհրդային շրջ./ Ախուրյանի ջրամբարի համատեղ օգտագործման մասին, Հայ- Իրանական միջկառավարական համաձայնագիր ջրի որակի մոնիտորինգի վերաբերյալ:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը գետային ավազանի կառավարման պլան, ներառյալ միջոցառումների		**X**			ՀՀ ՋՕ հոդված 17-ը սահմանում է ջրավազանային կառավարման պլանների գաղափարը:

ծրագիրը՝ խմելու ջրի կարգավիճակին հասնելն ապահովելու համար:					ՀՀ ջրային օրենսդրությունը լիովին համապատասխանում է ԵՄ պահանջներին, քանի որ ինչպես ՀՀ ՋՕ, այնպես էլ “Ջրի ազգային քաղաքակա-նության հիմնադրույթների մասին” ՀՀ օրենքը “Ջրի ազգային ծրագրի մասին” ՀՀ օրենքը կառուցված են ջրավազանային կառավար-ման մարմինների և կառավարման պլանների մշակման սկզբունքներով: Ջրային ռեսուրսների որակի բնագավառում ԵՄ օրենս-դրությունը կարգավորում է՝ - մարդկանց կողմից սպառվող ջրի որակը, -խմելու ջրի ջրառման նպատակով օգտագործվող մակերևութային ջրերի որակը, -լողալու, ձկների, խեցե-մորքների համար նախա-տեսված ջրային ռեսուրսների որակը: - ջրային ռեսուրսների որակի պահանջների պահպանման նկատմամբ մոնիտորինգի իրականացման կարգը և խախտման դեպքում կան-խարգելիչ կամ պաշտպանիչ գործողությունների ձեռնար-կումը: ՀՀ-ում ջրերի ստանդարտ-ներին ներկայացվող պահան-ջները կարգավորվում են ՀՀ ջրային օրենսգրքով և ՀՀ առողջապահության նախա-րարության կողմից խմելու ջրի, սննդամթերքում օգտա-գործվող ջրերի որակների վերաբերյալ ընդունված հրա-մաններով: Ջրային ռեսուրս-ների որակի նկատմամբ պահանջներ սահմանող օրենսդրական բացը հատկա-պես նկատելի է ձկնա-տնտեսական նշանակության նախատեսված ջրերի համար: ՀՀ -ում այս ջրերի որակի նկատմամբ պահանջների համար դեռևս կիրառվում են ԽՍՀՄ–ում ընդունված ՍԹԱ-ները, պահանջները, նորմերը:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենս-դրությունը հասարակայնության հետ կոնսուլտացիաներ գետային					ՀՀ ՋՕ հոդված 20-ը սահմա-նում է հանրային մասնակցու-թյունը գետավազանային կա-

ավազանների կառավարման պլանները մշակելիս:					ռավարման պլանների նախագծերի մշակման ընթացքում:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը ջրի կառավարման ոլորտում կառավարման մարմինների դասակարգում՝ համաձայն շրջանակային ջրային դիրեկտիվի դասակարգման:			X		Համաձայն «ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի /հ.10/ Հայաստանի բոլոր ջրային ռեսուրսները պետք է դասակարգվեն ըստ տարբեր ցուցանիշների, սակայն դասակարգման մոտեցումները տարբերվում են ԵՄ դասակարգման մոտեցումներից
Եթե այո, ապա նախահեսո՞ւմ է այն այդպիսի օրգանների նշանակումը՝ համաձայն այդ դասակարգման:		X			Համաձայն ՀՀ օրենսդրության մեջ ընդունված դասերի և մոտեցումների, ձեռնարկված են ջրային ռեսուրսների դասակարգման վերաբերյալ որոշ քայլեր, սակայն հարկ է նշել, որ այժմ ԵՄ կողմից ծրագրի շրջանակներում քայլեր են ձեռնարկվում ԵՄ դասակարգմանը մոտարկելու վերաբերյալ:
Նախատեսում և որոշու՞մ է արդյոք օրենսդրությունը բնապահպանական նպատակները:	X				ՀՀ ՋՕ, գլուխ 15
Արդյոք, ԵՄ օրենսդրությամբ որոշված ջրի որակի նպատակները համարվու՞մ են ազգային օրենսդրությունում ինտեգրված:			X		ՀՀ ջրային օրենսդրությունը նախատեսում է ջրի որակի ստանդարտների և սահմանային թույլատրելի չափանիշների մշակում, սակայն դրանք տարբերվում են ԵՄ կանոնակարգերով նախատեսված ստանդարտների համակարգից: ՀՀ Առողջ. նախ. 25.12.2002 թ. «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն սանիտարական կանոններ և նորմեր N 2-III-Ա2-1» թիվ 876 հրամանով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող ու բնակավայրերին կենտրոնացված համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները:
Արդյոք, ԵՄ օրենսդրությամբ սահմանված արտանետումների լիմիտները [վերջնասահմանները] համարվո՞ւմ են ազգային				X	ՀՀ-ում սահմանային թույլատրելի արտահոսքերը /ELV/ կարգավորվում են «Ջրային ռեսուրսներ թափվող

օրենսդրությունում ինտեգրված:					կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» ՀՀ բն. նախ. հրամանով՝ թիվ 464-Ն ընդունված 10.12.2003թ. Սակայն ԵՄ կանոնակարգերով նախատեսված ELV-ը այլ են: Այժմ բնապահպանության նախարարության կողմից ԵՄ ջրային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է ստանդարտների և արտահոսքերի համակարգի բարելավում:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը նախնական թույլտվություն ստանալը կամ արտահոսքերի վերահսկման հիման վրա կարգավորման՝ արտահոսքերի կետային (ստացիոնար) աղբյուրների շահագործման համար:	**X**				ՀՀ ջրային օրենսդրությունը նախատեսում է ջրօգտագործողի կողմից ՍԹԱ հաշվարկում, հաշվի առնելով ՀՀ Բն. նախ. հրամանով հաստատված հաշվարկման մեթոդաբանությունը : Կետային աղտոտման հետ կապված հարցերը վերահսկվում են Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքի համաձայն:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը նախնական թույլատրություն ստանալը՝ վերգետնյա և ստորգետնյա ջրերի օգտագործման և համալրման համար:	**X**				ՀՀ ՋՕ հոդված գլուխ 4-ը ինչպես նաև մի շարք ՀՀ կառավարության որոշումներ/ջ. օգտ. թույլտ. օրինակելի ձև հաստատման, փոխանցման և այլն/:
Արգելո՞ւմ է արդյոք օրենսդրությունը վտանգավոր նյութերի ուղիղ թափումը ստորգետնյա ջրեր:	**X**		.		ՀՀ ՋՕ հոդված 104-ը սահմանում է կեղտաջրերի թափման սահմանափակումները ցամաքուրդային ջրերի մեջ:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը միջոցառումներ աղտոտման տարածումը նախազգուշացնելու և վերահսկելու համար:	**X**				ՀՀ ՋՕ հադված 107-ը սահմանում է ջրային ռեսուրսների պահպանության հսկողության սկզբունքները, իսկ վերահսկողության հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ Բնապահպանական վերահսկողության մասին օրենքով:
Նախատեսո՞ւմ է արդյոք օրենսդրությունը ջրի մոնիտորինգի ծրագրեր:	**X**				Այո, ՀՀ ՋՕ հոդված 19-ը
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Մթնոլորտի օդի որակ	ՇՄՊԳ 2-ը նախատեսում է - “Ավտոտրանսպորտի վնասակար արտանետումների հաշվառման մեթոդիկայի մշակում” - “Զեզոքացուցիչների կիրառման խրախուսում” -«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի լրամշակում Այս գործողությունները ներառված են ԵՀՔ շրջանակներում մշակված				

	ԳՕ-ում: N 927-Ն հուլիսի 19-ի 2007 թ. ՀՀ կառավարության որոշումը , որով հաստատվել են այդ ծրագրի առաջնայնությունները սահմանել է օդի որակի ոլորտը որպես առանցքային: ԳՕ-ի վերլուծությունը սահմանում է՝ Մթնոլորտային օդի որակի բնագավառում ՀՀ օրենսդրությունը մասամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին: Մթնոլորտային օդի որակի բնագավառում ԵՄ օրենսդրությունում առկա են իրավական ակտեր, որոնք կարգավորում են առանձին աղտոտիչների ՍԹՔ չափաքանակները և այդ արտանետումների հետ կապված այլ հարցեր: ՀՀ օրենսդրությունում մթնոլորտային առանձին աղտոտիչների հետ կապված հարցերը (ՍԹՔ և մի շարք տեխնիկական հարցեր) կարգա-վորվում են գերատեսչական նորմատիվ ակտերով: ՀՀ օրենսդրությունը ավելի մանրամասնորեն է անդրադառնում մթնոլորտային օդի վրա ներգործության գնահատման և հաշվառման հարցերին: Առանձին աղտոտիչների դեպքում (ածխածնի մոնօքսիդ) ՀՀ ստան-դարտները ավելի խիստ են, քան ԵՄ ստանդարտները, իսկ բենզինի արտանետումների համար ստանդարտների ընդունումը նախատեսված է ԵՄ-ին անդամակցելու պահից: Գետնամերձ օզոնը անհրաժեշտ է ներառել աղտոտիչների ցանկում:
Կլիմայի փոփոխություն	ՇՄՊԳ 2-ը նախատեսում է - Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով նախագծերի իրականացման համար իրավական դաշտի և համապատասխան գործիքների մշակում: ԳՕ-ով կատարված վերլուծությունը, որպես առաջնայնություն ներառված է N 927-Ն հուլիսի 19-ի 2007 թ. ՀՀ կառավարու-թյան որոշման մեջ՝ - կլիմայի փոփոխության վերաբերյալ Կիոտոյի արձանագրությամբ և ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով սահմանված դրույթների կենսագործում:
Կենսաբազմազանության պահպանության	ՇՄՊԳ 2-ը նախատեսում է մի շարք միջոցառումներ ուղղված կենսաբազմազանության պահպանությանն ու կայուն կառավարմանը: N 927-Ն հուլիսի 19-ի 2007 թ. ՀՀ կառավարության որոշու-մը, որպես գերակայություն սահմանում է ՝ - շարունակել մշակել և իրականացնել առկա ազգային ծրագրերը և նախագծերը կենսաբազմազանության և հատուկ պահպանվող տարածքների ոլորտներում: Վերջին տարիներին կատարելագործվել է կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների օգտագործման օրենսդրական դաշտը: **ԲՀՊՏ ոլորտ** ԲՀՊՏ նոր օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ պահանջներին /կառավարման պլանների կազմում առանձին տարաքծների համար/: Անհրաժեշտ է մշակել նոր ծրագրեր Հայաստանում էկոցանցի ստեղծման և Եվրոպական էկոցանցին միանալու վերաբերյալ /ԵՄ համար Nature 2000 իսկ Հայաստանի և ԱՊՀ երկրների համար Emerald /: **Բնության պահպանության ոլորտում ԵՄ հստակ ամրագրում է** - վայրի բուսական և կենդանական աշխարհի տեսակների, ներառյալ դրանց բնակատեղերի պահպանության նկատմամբ հստակ մոտեցումները - վայրի ֆաունայի և ֆլորայի պահպանությունը առևտրի կարգավորման միջոցով, ինչպես նաև որոշ տեսակների ներմուծումը սահմանափակելու միջոցով - վայրի կենդանիներին կեն-դանաբանական այգիներում պահելու պայմանները: Հայաստանը վավերացրել է Վայրի բնության պահպանության մասին Կոնվենցիան/ Convention on Wildlife protection.

ոլորտ	ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է վերոնշյալ հարցերի կարգավորումը: **Անտառային ոլորտում** Վերջին տարիներին այս ոլորտը կարգավորող օրենսդրությունը բավականին փոփոխվել է՝ մշակվել է նոր ՀՀ ԱՕ և դրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր: Անտառային նոր օրենս-դրության մշակման ընթացքում հաշվի են առնվել ԵՄ կանոնակարգերի պահանջները: **Գենետիկական ռեսուրսների կառավարման ոլորտում** ՀՀ-ում կարգավորված չեն գենետիկական ռեսուրսների մատչելիության և դրանց օգտագործումից ստացված օգուտների արդարացի բաշխման հիմնախնդիրը:				
Թափոնների կառավարում	Թափոնների կառավարման բնագավառում ՀՀ օրենսդրու-թյունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին, մասամբ համապատասխանում է թա-փոնների կառավարման, թա-փոնների բեռնափոխադրում-ների կարգավորման, միջու-կային և ռադիոակտիվ թափոնների փոխադրման ոլորտներում: ԵՄ սահմանում է՝ - աղբավայրերի կառավարումը - թափոնների հեռացումը, -թափոնների հետևանքով առաջացած աղտոտման կանխարգելումը և վերահսկումը, -փաթեթավորումը և փաթեթավորումից առաջացած թափոնների կառավարումը, - օգտագործման համար ոչ պիտանի մարտկոցների և դրանց տարատեսակների հեռացումը, -շահագործման համար ոչ պիտանի փոխադրամիջոցների կառավարումը, -արդյունահանող արդյունաբերությունների թափոնների կառավարումը: Նշված հարցերի կարգավորումը ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է:				
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	**52** **[0-72]**				
Տոկոս	**75,1%**				
Մեկնաբանություն-ներ և բացատրություններ					

Հարց 6. Վարչական կառույցների և պրոցեդուրաների /գործընթացների/ ուժեղացումը

4.6.4 Բնապահպանություն

Միջոցներ ձեռնարկել բնապահպանության լավ կառավարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար և սկսել դրանց կիրառումը.

ուժեղացնել վարչական կառույցները և ընթացակարգերը՝ բնապահպանությանը առնչվող խնդիրների ռազմավարական ծրագրավորումը, ինչպես նաև համապատասխան մասնակիցների միջև համակարգումն ապահովելու նպատակով,

սահմանել ընթացակարգեր բնապահպանական տեղեկատվության մատչելիության և հասարակայնության մասնակցության վերաբերյալ, այդ թվում կիրառելով Օրհուսի կոնվենցիան,

ամրապնդել շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման կառույցներն ու գործառությունները,

ստեղծել հաղորդակցական ռազմավարություններ բնապահպանության քաղաքականության առավելությունների մասին, աջակցել քաղաքացիական հասարակության դերակատարներին և տեղական իշխանություններին:

Հարցը	այո			ոչ	ծանոթագրություններ
	գերազանց	լավ	բավարար		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Ճարչական կառույցներ Ազգային մակարդակով					
Ստեղծվե՞լ է երկրում Բնապահպանության նախարարություն: Եթե այո, ապա տարածո՞ւմ է այն իր լիազորությունները երկրում բոլոր հիմնական բնապահպանական հարցերի վրա (օրինակ, ջուրը, թափոնները, օդը, կենսաբազմազանությունը և այլն):	**X**				Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ՀՀ ԲՆ ստանձնել է կենտրոնական դեր:
Եթե ոչ, ապա զբաղվո՞ւմ են արդյոք բնապահպանական հարցերով այլ կառույցներ կառավարական մակարդակով (օրինակ, էներգետիկայի նախարարություն, տրանսպորտի և այլն):		**X**			Բացի ՀՀ ԲՆ այլ պետական կառավարման մարմիններ՝ ՀՀ Առողջապահության, էներգետիկայի և բնական պաշարների, Գյուղատնտեսության, Տրանսպորտի և կապի, էկոնոմիկայի նախարարությունները առանձին բնական ռեսուրսների կառավարման, պահպանության և օգտագործման ոլորտներում կատարում են որոշակի գործառույթներ:
Գործողությունների ծրագիրն ընդունելու պահից ավելացե՞լ են ռեսուրսները՝ նպատակ ունենալով ապահովել իշխանության ազգային կառույցների կողմից իրենց առաջադրանքների կատարումը:				**X**	Ը չ
Տարածաշրջանային-տեղական մակարդակով					
Տարածաշրջանային-տեղական իշխանություններն ունե՞ն լիազորություններ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Կա՞ արդյոք ազգային և տարածաշրջանային-տեղական իշխանությունների լիազորությունների հստակ բաժանում:		**X**			Բնապահպանության ոլորտը կարգավորող առանձին օրենքներով սահմանվում են ՀՀ կառավարության, լիազոր մարմինների, տեղական և տարածքային մարմինների պարտականությունները առանձին ենթաոլորտներում:
Գործողությունների ծրագիրն ընդունելու պահից ավելացե՞լ են արդյոք պաշարները՝ նպատակ ունենալով ապահովել իշխանության կառույցների կողմից իրենց առաջադրանքների կատարումը:				**X**	Ը չ
Ռազմավարական պլանավորում					
Գոյություն ունի՞ կամ	**X**				Բնապահպանության

պլանավորվա՞ծ է արդյոք շրջակա միջավայրի պահպանության ռազմավարության ընդունումը: Եթե այո, ապա ունի՞ այն լավ որակ:					ոլորտում հիմնական ռազմավարական փաստաթուղթ է հանդիսանում ՇՄՊԳ Ազգային ծրագիրը, որը մշակվում է 5 տարի ժամկետով, իր մեջ ներառելով մանրամասն գործողություններ բոլոր ենթաոլորտների համար: ՇՄՊԳԱԾ- 2-ը մշակվել է 2008-2012 թթ. համար: ԵՔՀ ԳԾ-ի մեջ ներառված ըստ ենթաոլորտների վերլուծության առաջնայնությունները հիմնականում ներառված են ՇՄՊԳԱԾ-ի մեջ:
Արվե՞լ են արդյոք քայլեր ռազմավարության իրականացման համար:		X			ՇՄՊԳ 1-ը մշակված 1998-2002 թթ. նախատեսել էր մի շարք միջոցառումներ, որոնք կատարվել են նշված ժամանակահատվածում: ՇՄՊԳ 2-ը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:
Վերանայվո՞ւմ է արդյոք ռազմավարությունը կանոնավորապես (օրինակ, յուրաքանչյուր երեք տարին մեկ):		X			ՇՄՊԳ-ի մեջ ներառված գործողությունների ծրագրի առանձին միջոցառումներ նախատեսված են ՄԺԾԾ-ով ներկայացնել պետական բյուջեից ֆինանսավորման /3 տարով/:
Գոյություն ունի՞ արդյոք ռազմավարություն առանձին ոլորտների համար, որոնք աջակցում են ընդհանուր ռազմավարությանը:		X			ՀՀ բնապահպանության առանձին ենթաոլորտների համար մշակված են մի շարք հայեցակարգային փաստաթղթեր, որոնք կազմում են ՇՄՊԳ-ի անբաժանելի մաս:
Գոյություն ունե՞ն այնպիսի պրոցեդուրաներ, ինչպիսիք կոնսուլտացիաներն են նախարարությունների -իշխանության կառույցների միջև:		X			Հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերի մշակման ընթացքում սովորաբար ձևավորվում են միջգերատեսչական աշխատանքային խմբեր որոնք համատեղ աշխատանքային հանդիպումների արդյունքում մշակում են հայեցակարգերի նախագծերը: Առանձին ծրագրերի իրականացման շրջանակներում կարող են կազմվել ղեկավար խորհուրդներ, որոնք նույնպես պարբերաբար հանդիպումների ընթացքքում ներկայացնում են իրենց գերատեսչության շահերը: Արդյունքում ձևավորված փաստաթղթերը ներկայացնում են տարբեր

					շահագրգիռ կողմերի շահերը:
Եթե այո, ապա Բնապահպանության նախարարության կամ այլ բնապահպանական կառույցների դերը կարևո՞ր է այդ գործընթացներում:	X				Այո, կարևոր է:
Ընդունվե՞լ են արդյոք պաշտոնական պրոցեդուրաներ /գործընթացներ/ իշխանական կառույցների և այլ կարևոր, շահագրգիռ անձանց (քաղաքացիական հասարակություն, գիտնականներ) միջև՝ կոորդինացումը հեշտացնելու համար:		X			Բնապահպանության ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր նախատեսում են հասարակության մասնակցություն :
Բարելավվե՞լ է արդյոք համագործակցությունը տարբեր շահագրգիռ դեմքերի միջև Գործողությունների ծրագրի ստորագրման պահից:			X		2008թ. որոշ չափով բարելավվել է ՀԿ-ների մասնակցությունը ՀՀ Կառավարության կողմից որոշումներ ընդունելիս:
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	**24 [0-39]**				
Տոկոս	**61,5%**				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 7. Կառույցների և ընթացակարգերի /պրոցեդուրաների/ ուժեղացում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում անցկացնելու համար (բնապահպանական փորձաքննություն):

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Ընդհանուր հարցեր					
Գոյություն ունեցող օրենսդրությունը արդյոք պահանջո՞ւմ է ՇՄԱԳ (շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում) գործունեության համար, որը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ բնական պաշարների և շրջակա միջավայրի վրա: Եթե ոչ, ապա պլանավորվո՞ւմ է արդյոք այդպիսի օրենսդրության ընդունումը:		X			«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 1995թ. նոյեմբերի 20-ին, իսկ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին Կոնվենցիան /Էսպոո,1991 / վավերացվել է 21.02. 1997 թ. –ին: Հետևաբար գոյություն ունեն որոշակի բացեր և առաջանում է ԵՄ համապատասխան օրենսդրությանը համապատասխանեցման անհրաժեշ-

					տություն: «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծում արված են համապատասխան ճշգրտումներ, սակայն այն դեռ չի ընդունվել: /Օրենքի նախագիծը մշակվել է "Trans-parency international –Arme-nia" ՀԿ-ի նախաձեռնությամբ, Մեծ Բրիտանիայի Կառավարության աջակցությամբ:
Հանդիսանու՞մ է, արդյոք, ՇՄԱԳ գործընթացը բավարար:			**X**		
Կառույցները					
Արդյոք, հստակորեն որոշվա՞ծ և բաշխված են պարտականությունները ազգային և տարածաշրջանային-տեղական իշխանությունների միջև:			**X**		ՀՀ օրենսդրության մեջ նկատելի է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հարաբերությունների ոչ հստակ կանոնակարգում: Օրինակ, այդ մասին է վկայում վերջին տարիների ընթացքում համայնքային սեփականության տասնյակ հազարավոր հեկտարներով հողերի օտարման գործընթացը, որը, սակայն, չի ուղեկցվում անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներով և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականով: Մինչդեռ ՀՀ հողային օրենսգրքով սահմանված է, որ պետական ու համայնքային սեփականության հողերն օտարվում են հողաշինարարական, անտառշինական և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, իսկ վերջիններս ենթակա են ինչպես բնապահպանական, այնպես էլ քաղաքաշինական համալիր փորձաքննության:
Բավարա՞ր են արդյոք իշխանության կարգավորող օրգանների հնարավորությունները:[1)]		**X**			Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրով /ՇՄՊԳԱԾ/ 2008-2010 թթ. նախատեսվում է «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա կիրարկումն ապահովող

[1)] Այս հարցը բավականին սուբյեկտիվ է, բայց կարևոր, քանի որ առանց բավարար հնարավորությունների հազիվ թե հնարավոր լինի գործնականում պահպանել իրավական պահանջները: Այդ հարցը գլխավորապես վերաբերում է ազգային և տարածաշրջանային մակարդակով ՇՄԱԳ անցկացման համար պատասխանատու անձնակազմի քանակին և որակավորման մակարդակին:

					ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում, որն էլ կբերի բնապահպանական փորձաքննությունն իրականացնող կառույցների հզորությունների ամրապնդմանը:
Ընթացակարգեր					
Հստակորե՞ն են արդյոք որոշված չափանիշները և ընթացակարգերը՝ որոշելու համար, ինչպիսի գործունեությունն է ՇՄԱԳ-ի ներքո ներառվում:		**X**			Գործում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ Կառավարության որոշումը (30.03.1999թ. թիվ 193): Սակայն կան բացեր, որոնք նախատեսվում է իրականացնել ՇՄՊԳ-ի գործողությունների ծրագրով 2008-2010 թթ. ՄԺՕՕ-ով:
Գոյություն ունեցող ընթացակարգը նախատեսո՞ւմ է նախնական փորձաքննության /սկրինինգի/ փուլ որոշելու համար՝ առաջարկված նախագիծը ենթակա՞ է ՇՄԱԳ-ով անցկացնելու:	**X**				«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:
Գոյություն ունեցող ընթացակարգը նախատեսո՞ւմ է սկոուպինգի փուլ՝ որոշելու համար պոտենցիալ նշանակալի ազդեցությունը և գնահատման ենթակա հիմնական այլընտրանքները:	**X**				ՀՀ օրենսդրությունը նախատեսում է նախնական բնապահպանական փորձաքննություն:
Արդյոք, պատվիրատուի ներկայացրած տեղեկատվությունը հստակ որոշակի՞ է, մասնաորապես, ՇՄԱԳ-ի նվազագույն պարունակությունը սահմանելու ճանապարհով:			**X**		“Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ հանդիսացող ձեռնարկողից պահանջվում է փորձաքննության համար ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց անվանումները և այդ փաստաթղթերում պարունակվող տեղեկատվության բովանդակությունը սահմանում է ՀՀ կառավարությունը: Մինչդեռ, պետք է օրենքով ամրագրված լիներ պահանջվող փաստաթղթերի անվանումները և դրանցում պարունակվող տեղեկատվության չափանիշները, իսկ փաստաթղթերի բովանդակային բացվածքի նկատմամբ պահանջ-

					ները կարող են սահմանվել ՀՀ Կառավարության կողմից: Օրենքի նոր նախագծում կատարված են համապա-տասխան ճշգրտումներ (հոդված13):
Գոյություն ունե՞ն և կիրառվու՞մ են իշխանական համապատասխան կառույցների հետ խորհրդակցելու ընթացակարգերը:		X			«Բնապահպանական պետա-կան փորձաքննության մա-սին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 6, 8, 9: /ինչպես արդեն նշվել է, օրենքը դեռ ընդունված չէ/:
Օրենսդրությունը պահանջո՞ւմ է իշխանական կառույցների և համապատասխան երկրների շահագրգիռ կողմերի հետ ուղիղ խորհրդակցությունների անցկացում անդրսահմանային հնարավոր ազդեցության դեպքում:			X		ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Անդրսահման-ային ենթատեքստում շրջա-կա միջավայրի վրա ազդեցու-թյան գնահատման մասին Կոնվենցիան /Էսպոո 1991/ վավերացվել է 21.02. 1997 թ., իսկ «Ռազմավարական էկոլո-գիական գնահատման մա-սին» արձանագրու-թյունը /Կիև 2003/ ստորա-գրվել է 21. 05. 2003 թ.: Սակայն ՀՀ օրենսդրությունը չի նախա-տեսում համա-պատասպան գոր-ծընթաց-ներ: ՇՄՊԳ ազ-գային ծրագրով 2008-2010 թթ. ՄԺՕՕ-ով նախատեսվում է բնապահպանական փորձա-քննության, շրջակա միջավայ-րի վրա ազդեցության ու ռազ-մավարական էկոլոգիական գնահատումների գործընթաց-ների կանոնակարգում՝ միջ-ազգային պայմանագրերի պահանջներին համապա-տասխան:
Գոյություն ունե՞ն հատուկ ընթացակարգեր նախնական փուլերում հասարակայնության արդյունավետ տեղեկացումն ապահովելու համար:		X			«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննու-թյան մասին» ՀՀ օրենք , հոդված 6: «Բնապահպանական պետա-կան փորձաքննության մա-սին», ՀՀ օրենքի նախագծում արված են համապատասխան ճշգրտումներ (հոդված 20):
Շահագրգիռ հասարակայնությունը հնարավորություն ունի՞ նախնական փուլերում և արդյունաետորեն մասնակցություն ունենալ բնապահ-պանական հարցերի շուրջ որոշումներ ընդունելու գործընթացին:		X			«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննու-թյան մասին» ՀՀ օրենք , հոդված 6, 8, 9: ՇՄՊԳ-ի ազգային ծրագրով 2008-2010 թթ. ՄԺՕՕ-ով նախատեսվում է բնապահպանական տեղե-կատվության հասանելիու-թյանը, իրազեկմանը և որոշումների կայացմանը լայն հասարակայնության

					մասնակցության ապահովմանն ուղղված միջոցառումների ամրագրում:
Որոշումներ կայացնելու գործընթացում ուշադրության արժանանո՞մ են հասարակայնության և համապատասխան բնապահպանական պետական օրգանների խորհրդակցությունների արդյունքները:			X		«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (հոդված 11): «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծում արված է համապատասխան ճշգրտում (հոդված 17):
Պետական լիազորված մարմինը պարտավո՞ր է տեղեկացնել հասարակայնությանը նախագծի իրականացման համաձայնություն (մերժում) տալու իրենց որոշման մասին:	X				«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին » ՀՀ օրենք , հոդված 11:
Պետական իշխանության լիազորված մարմինը պարտավո՞ր է արդյոք նախագծի իրաանացման (մերժման) համաձայնություն տալու իրենց որոշման մասին տեղեկացնել այն երկրներին, որոնց հետ խորհրդակցություններ են անցկացվել անդրսահմանային ազդեության շուրջ:				X	Ոչ
Արդյոք հստակորեն որոշվա՞ծ են տեղեկատվության մատչելիության բացառությունները, կապված, օրինակ, կոմերցիոն գաղտնիության հետ:	X				«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին » ՀՀ օրենք , հոդված 8:
Կարո՞ղ է արդյոք պետական կառույցը, որը նախագծի իրականացման համաձայնության մասին որոշում է կայացրել, լրացուցիչ պահանջներ հաստատագրի դրական որոշմանը:		X			«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին » ՀՀ օրենք , հոդված 19: ՇՄՊԳԱՕ-ի 2008-2010 թթ. ՄԺՕՕ-ով նախատեսվում է «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում, որն էլ կբերի բնապահպանական փորձաքննությունն իրականացնող կառույցների հզորությունների ամրապնդմանը:
Հստակորե՞ն են արդյոք հաստատվել հասարակայնության կողմից որոշումների բողոքարկման ընթացակարգը:	X				«Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենք , հոդված 21: Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի Հոդված 94.1:
ՇՄԱԳ-ի ընթացակարգը նախատեսո՞ւմ է հետնախագծային վերլուծության պահանջ: Եթե այո,		X			«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին » ՀՀ օրենք , հոդ-

ապա օգտագործվո՞ւմ է արդյոք այդպիսի ընթացակարգը:					ված 16: «Բնապահպանական պետա-կան փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագ-ծում արված են համապա- կասխան ճշգրտումներ (հոդված 10):
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	34 [0-60]				
Տոկոս	56,7%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 8. Թույլատրող և իրավակիրառական կառույցների բարելավումը

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Թույլատրություններ					
Երկրում գոյություն ունի՞ արդյոք համապատասխան թույլատվության համակարգ:		**X**			ՇՄՊԳ ազգային ծրագրով 2008-2010 թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է ՀՀ բնապահպանական օրենսդրությունը Եվրամիության օրենսդրության պահանջների հետ համապատասխանեցում:
Հանդիսանո՞ւմ է արդյոք թույլատվության համակարգը ինտեգրացված, այսինքն գոյություն ունի միասնական ինտեգրացված թույլատվություն:				**X**	ՀՀ թույլտվությունների համա-կարգը ինտեգրացված չէ: Ջրօգտագործման թույլտվու-թյունները կարգավորվում են «ՀՀ ջրային օրենսգրքի» Գլուխ 2-ով և գլուխ 5-ով: Թույլտվությունները տրվում են ինչպես ՀՀ Բնապահպա-նության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության, այնպես էլ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից: Թափոնների համար թույլտվու-թյունները համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի տրվում են ՀՀ Առողջապահության նախարարու-թյան, տարածքային կառավարման մարմինների կողմից, իսկ վտանգավոր թափոնների համար նաև ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից: (Հայաստանը ստորագրել է և 1999թ. վավերացրել է Բազելի կոնվենցիան, 2003թ. վավերացրել է

					Ռոտերդամի ու Ստոկհոլմի կոնվենցիաները:) Մթնոլորտի համար թույլտվությունները, համաձայն «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին» ՀՀ Կառավարության 30.03.1999թ. N192 որոշման տրվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից: Ընդերքօգտագործման թույտվությունները կարգավորվում են «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով: Թույլտվությունները տրվում են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների կողմից: ՇՄՊԳ-ի ազգային ծրագրով 2008-2010 թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է Շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների համալիր և ինտեգրված կանխարգելման մեխանիզմների ստեղծման ծրագրային փաթեթների կազմում , որի արդյունքում կիրականացվի շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործություն-ների համալիր և ինտեգրված կանխարգելման, մասնավորապես, համալիր թույլտվու-թյունների ու ինքնահսկման համակարգերի ներդրմանն անհրաժեշտ միջոցառումների ամրագրում և իրականացում:
Ունե՞ն համապատասխան կառույցները ռեսուրսներ թույլատվական ֆունկցիաներ իրականացնելու համար:[1)]			**X**		Անհրաժեշտ են ինստիտուցյոնալ բարեփոխումներ
Գործողությունների ծրագրի ստորագրման պահից ավելացե՞լ են արդյոք թույլատվության նպատակներին ուղղված ռեսուրսները (ֆինանսական և մարդկային):				**X**	ՀՀ բնապահպանության նա-խարարության, ՀՀ առող-ջապահության նախարաու-թյան, ՀՀ էկոնոմիկայի նախա-ռարության, ՀՀ էներգետի-կայի և բնական պաշարների նա-խարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության համապատասխան աշխատակից-

[1)] Գնահատականը պետք է ուշադրություն դարձնի պաշարների մակարդակին. օրինակ, բացակայությունը, սահմանափակ լինելը, բարձր որակյալ կադրերը և այլն:

					ների համար անհրաժեշտ են լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ:
Իրականացվե՞լ են քայլեր թույլատվության կառույցների հնարավորություններն ուժեղացնելու համար (թրենինգներ, ձեռնարկներ և այլն):			X		Որոշ ծրագրերի շրջանակներում իրականացվել են դասընթացներ նախարարությունների համապատասխան վարչությունների համար:
Հե՞շտ է որոշել և համագործակցել թույլատվությունների համար պատասխանատու կառույցների հետ:		X			Ըստ համապատասխան նախարարությունների ներքին ընթացակարգերի:
Սահմանո՞ւմ է օրենսդրությունը թույլատվություն տալու ժամկետները: Եթե այո, ապա պահպանվո՞ւմ են դրանք պատշաճ ձևով:	X				Առանձին թույլտվությունների տրման ժամկետները հստակեցվում են տվյալ ոլորտները կանոնակարգող օրենսդրությամբ:
Իրավակիրառական կառույցներ					
Երկրում գոյություն ունե՞ն արդյոք բնապահպանական տեսչության կառույցներ:	X				ՀՀ Բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչություն
Ներքին գործերի նախարարության (կամ համարժեք կառույցների) կառուցվածքում աշխատո՞ւմ են բնապահպանական հարցերի համար պատասխանատու բաժիններ:			X		ՀՀ ոստիկանությունն ունի ապօրինի ձկնորսության և անտառահատումների դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացման պարտավորություն, այդ թվում՝ աջակցություն ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներին՝ անտառային ֆոնդի արժեքավոր ծառատեսակների պահպանությունը բարելավելու նպատակով:
Համարվո՞ւմ են արդյոք կառույցների լիազորություններն ու հանձնարարությունները հստակորեն որոշված և բաժանված:	X				ՀՀ վարչական և քրեական օրենսդրության հիման վրա:
Պլանավորվո՞ւմ է ընդունման բնապահպանական տեսչությունների պլանը (պլանները):	X				ՇՄՊԳ ազգային ծրագրով 2008-2010 թթ. ՄԺԾԾ-ով նախատեսվում է Բնապահպանական տեսչական համակարգի հզորությունների ամրապնդման ծրագրային փաթեթի մշակում:
Իրականացվե՞լ են արդյոք քայլեր իրավակիրառական կառույցների հնարավորություններն ուժեղացնելու ուղղությամբ (թրենինգներ, ձեռնարկներ և այլն):			X		«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում իրականացվել են որոշ դասընթացներ, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներ: Սակայն անհրաժեշտ է ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում:
Գոյություն ունի՞ հասարակության համար մատչելի վիճակագրություն պատասխանատվության կանչված իրավախախտների քանակի	X				Ամեն տարի ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակվում է «Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում» ամենամյա ազգային զեկույ-

վերաբերյալ: Եթե այո, ապա հաճա՞խ է արդյոք այն նորոգվում:					ցը, որը պարունակում է «Բնապահ-պանության իրավախախտումներ» գլուխը: Զեկույցը տեղադրվում է նաև վիճակագրական ծառայության ինտերնետային կայքում:
Գոյություն ունե՞ն արդյոք վիճակագրությամբ ստացված տվյալների վերլուծական հետա-զոտություններ՝ իրավակիրառման որակի գնահատման նպատակով:		X			Զեկույցը պարունակում է որոշ անալիտիկ նյութեր աղյուսակների տեսքով:
Գործողությունների ծրագրի ստորագրման պահից սկսած ավելացե՞լ են բնապահպանա-կան օրենսդրության կիրառման համար առանձնացված հատուկ ռեսուրսները (ֆինանսական և մարդկային):				X	ՀՀ բնապահպանության նախարա-րության, ՀՀ էկոնոմիկայի նախա-րարության, ՀՀ ոստիկանության համապատասխան աշխատակից-ների համար անհրաժեշտ են լրա-ցուցիչ վերապատրաստման դասընթացներ:
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	25 [0-45]				
Տոկոս	55,6%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 9. Տեղեկատվության մատչելիության և հասարակայնության մասնակցության բարելավումը

Առաջնային ոլորտ 3.
Խթանել հետագա տնտեսական զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում, այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը:

4.6.4. Բնապահպանություն
Միջոցներ ձեռնարկել բնապահպանության կամ կառավարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար և սկսել դրանց կիրառումը.
- սահմանել ընթացակարգեր բնապահպանական տեղեկատվության, մատչելիության և հասարակության մասնակցության վերաբերյալ, այդ թվում կիրառելով Օրհուսի կոնվենցիան:

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գե-րա-զանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Ընդհանուր հարցեր [1]					
Վավերացրե՞լ է երկիրը Օրհուսի կոնվենցիան:	X				Վավերացրել է 14.05.2001թ.
Ընդունվե՞լ է արդյոք օրենսդրություն Օրհուսի կոնվենցիայի դրույթները	X				Հատուկ օրենք չկա, սակայն Օրհուսի կոնվենցիայի /ՕԿ/ սկզունքները արտացոլված են ՀՀ

[1] Այս հարցը վերաբերում է ԵՊԴ արևելյան երկրներին, որոնք հանդիսանում են ՄԱԿ-ի ԵՏԿ անդամներ:

երկրում ներդնելու համար:					հետևյալ օրենքներում. “Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին” հ.2, հ.13, /2001/, “Տեղեկատվության ազատության մասին” հ.7,հ.8 /2003/, “ ՀՀ Ջրային օրենգրքում”, հ.20, /2002/, - “Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքում”, հ.54, /2002/, ինչպես նաև մինչև ՕԿ վավերացումը ընդունված մի շարք այլ օրենքներում. “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին” /1995/, “Քաղաքաշինության մասին” /1998/, “Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին” /1998/ և այլն:
Հասանելիությունը էկոլոգիական /բնապահպանական/ ինֆորմացիային					
Գոյություն ունե՞ն պատշաճ վարչական համակարգեր հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու հարցումներին ժամանակին պատասխան ստանալն ապահովելու համար:		**X**			ՀՀ Բնութնախի Տեղեկատվական – լրատվական կենտրոնը հավաքագրում, վերլուծում է բնապահպանական տեղեկատվությունը, տեղադրում տվյալների բազայում, տարածում այն: Բնութնախին կից գործում է ԵԱՀԿ-ի /OSCE/ օգնությամբ ստեղծված Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնը /Օրհուս կենտրոն/ Երևանում: 13 Օրհուս կենտրոններ գործում են նաև ՀՀ մարզերում: ՀՀ Քաղաքաշինության նախում գործում է քաղաքային տնտեսության ոլորտում թափոնների վերաբերյալ տեղեկատվության հասարակական կենտրոն: Բնապահպանական ինֆորմացիան տարածում են նաև Ազգային վիճակագրական ծառայությունը, Առողջապահության նախարարությունը և մի շարք այլ նախարարություններ: Սակայն տեղեկատվությունը ոչ միշտ է տրամադրվում լիարժեք ծավալով և սահմանված ժամկետում: Բացի այդ, ՏԻՄ-երը դեռ պատրաստ չեն լիարժեք իրականացնել բնապահպանական ինֆորմացիայի մատչելիությունը: ԵԱՀԿ աջակցությամբ Երևանի պետական համալսարանում ստեղծվել է էկոլոգիական իրավունքի կենտրոն:
Արդյոք մատչելի՞ են պատշաճ ղեկավար սկզբունքները պետական իշխանությունների ունեցած տեղեկատվության մասին և այն մասին, թե ինչպե՞ս կարելի է դեպի այդպիսի տեղեկատվութուն մուտք ստանալ:	**X**				Միջազգային կառույցների օգնությամբ Բնութ-նախի և ՀԿ-ների կողմից հրատարակվել են 2 տեղեկագիր բնապահպանական ինֆորմացիային տիրապետող-ների մասին: 2004թ. ԵՄ ՏԱՍԻՍ /EU TACIS/ ծրագրով հրատա-րակվել է

					գիրք “Որտեղ և ինչպես ստանալ բնապահպանական տեղեկատվություն Հայաստանի պետական կառույցներում” գիրքը:
Երկրում արդյոք կա՞ն բնապահպանական տեղեկատվության հրապարակման լավ հաստատված կանալներ (օրինակ, օրենքներ, դատական պրակտիկա, գործադիր իշխանության որոշումներ և այլն):		**X**			Բնապահպանական տեղեկություն կարելի է ստանալ հետևյալ կայքերում՝ www.aarhus.am (Օրհուս-կենտրոն), www.mnp.am և www.mnpiac.am (ՀՀ Բնապահպանության նախ-ն), www.armstat.am (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն), www.gov.am (ՀՀ Կառավարություն), www. parliament .am (ՀՀ Ազգային ժողով) և համապատասխան տեղեկագրերում ու զեկույցներում: EPAC ՀԿ-ն ԵԱՀԿ-ի օգնությամբ հրատարակում է “ՀՀ էկոլոգիական իրավունք /նորմատիվ իրավական ակտերի ժողովածուն/: Աղտոտիչների արտանետումների և տեղափոխման ռեգիստրի /ԱԱՏՌ/ ազգային համակարգը դեռ ստեղծված չէ, բայց ՄԱԿԵՏՀ-ի /UNECE/ և ԵԱՀԿ-ի /OSCE/ օգնությամբ հրատարակված է ԱԱՏՌ մասին արձանագրության իրականացման ուղեցույց /2008/: (սակայն հարկ է նշել նաև տրված տեղեկատվության ոչ լիարժեքության և պորտալի բացակայության մասին)
Տեղեկատվություն ստանալը արդյոք անվճա՞ր է[2] կամ ոչ թանկ[3]:		**X**			Խնդիրը կարգավորվում է “Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին” /2001/ և “Տեղեկատվության ազատության մասին” /2003/ օրենքներով, սակայն պայմանները պրակտիկորեն օպտիմալ չեն:
Գոյություն ունի՞ արդյոք կոմերցիոն տեղեկատվության և անձի մասին տվյալների օգտագործման պաշտպանված կառավարման համակարգ:	**X**				Խնդիրը կարգավորվում է ”Պետական և ծառայողական գաղտնիքի մասին” և “Տեղեկատվության ազատության մասին” /2003/ օրենքներով:
Իշխանության կառույցների հաար գոյություն ունե՞ն արդյոք հստակ ղեկավար սկզբունքներ այն մասին, թե ինչպե՞ս կիրառել կոմերցիոն գաղտնիքի վերաբերյալ պահանջները, ներառյալ տեղեկատվության բացահայտման հարցը՝ կապված հասարակական հետաքրքրության հետ:			**X**		Հստակ մեխանիզմներ մշակված չեն, ինչը հաճախ խոչընդոտում է համապատասխան տեղեկատվության մատչելիության ապահովմանը:

[2] Եթե այո, ապա գնահատականը պետք է լինի «այո»-«գերազանց»:

[3] Եթե այո, ապա գնահատականը պետք է լինի «այո»-«լավ», կամ «այո»-«բավարար», կախված այն բանից, թե մատչելիությունը դեռևս պարզ է՝ չնայած վճարին, կամ եթե մատչելիության համար կան խոչընդոտներ:

Հասարակայնության մասնակցությունը					
Երկրում գոյություն ունե՞ն ընթացակարգեր, որոնք հասարակայնությանը հնարավորություն են տալիս մասնակցություն ունենալ որոշումներ ընդունելիս, օրինակ, սահմանվե՞լ են արդյոք հստակ պրոցեդուրաներ գրավոր /կամ լսումներին/ մեկնաբանություններ ներկայացնելու համար և որոշումների ազդարարմանծանուցման համար:			**X**		"Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին" ՀՀ օրենքի համաձայն, հասարակությունը պետք է մասնակցի շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության գործընթացին հենց սկզբից: 10-օրյա ժամկետում ազդակիր համայնքի ղեկավարները պետք է լիազորված մարմնին ներկայաց-նեն իրենց և հասարակական կարծիքը: Բնապահպանության Նախ-նը, ՀՀ Կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը ապահովում են հասարակության մասնակցությունը Նախարարության փորձաքննական եզրակացությունների, բնապահպանական նշանակության օրենքների և այլ նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկումներում: ՀՀ Կառավարության և Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների առընթեր գործում է անկախ փորձագետների ինստիտուտը, որտեղ մասնակցում են նաև որոշ ՀԿ-ներ: ՀՀ ԱԺ-ն կազմակերպում է խորհրդարարական լսումներ, Բնութնախը և այլ նախարարություններ կազմակերպում են հանրային լսումներ և այլն: Սակայն օրենսդրորեն կարգավորված չէ ոչ հասարակայնության մասնակցության, ոչ հասարակության կարծիքը հաշվի առնելու ընթացակարգը: Ինչպես արդեն նշվել է, մի քանի տարի է, ինչ պատրաստ է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին" ՀՀ օրենքի նոր նախա-գիծը՝ "Բնապահպանական պետական փորձաքննության մասին" անվանմամբ, որը պատրաստվել է ՀԿ-ների նախաձեռնությամբ և պետական կառույցների մասնակցությամբ: Նախագծում հաշվի են առնված և լրացված են գործող օրենքի բացթողումները, սակայն այն, անհասկանալի պատճառներով, դեռ չի ներկայացվել Ազգային Ժողով:
Եթե գոյություն ունեն, ապա լա՞վ են արդյոք քաղաքացիները տեղեկացված այդպիսի ընթացակարգերի մասին:			**X**		Ինչպես արդեն նշվել է, թեկուզ և համապատասխան ընթացակարգերը օրենսդրորեն ամրագրված չեն, հասարակության մասնակցությունը որոշ չափով ապահովվում է: Սակայն քաղաքացիները լիարժեք

					տեղեկացված չեն: ԵՄ ՏԱՍԻՍ /EU TACIS/ ծրագրի շրջանակներում իրա-զեկման մեխանիզմների վերաբերյալ դրույթը մշակվել էր և այժմ քննարկման փուլում է: Այդ ծրագրի շրջանակներում նաև ՀԿ-ները զգալիորեն իրազեկվել են իրենց իրավունքների վերաբերյալ: Պետք է նշել նաև, որ վերջերս Բնութնախը հասարակական լսումները փոխարինում է միայն համապատասխան կայքում նախագծերի տեղադրմամբ ու ՀԿ-ների իրազեկմամբ՝ կայքում իրենց կարծիքը տեղադրելու հնարավորության վերաբերյալ: Հայաստանի պայմաններում այդ մոտեցումը զգալիորեն սահմա-նափակում է հասարակության մասնակցության հնարավորությունները:
Մշակվե՞լ են ինստրումենտներ՝ հստակեցնելու, թե որ հասարակայնությունն է մասնակցելու: Մասնավորապես, եթե գոյություն ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթաց, այն արդյոք նախատեսու՞մ է հասարակայնության մասնակցությունը:		**X**			Համապատասխան լիարժեք ինստրումենտներ մշակված չեն: Սովորաբար հրավիրվում են տվյալ ոլորտում առավել ակտիվ գործող ՀԿ-ները և /ավելի հազվադեպ/ ազդակիր համայնքների ներկայացուցիչները:
Պատշաճ ձևով հաշվի առնվո՞ւմ են արդյոք հասարակայնության մասնակցությամբ արդյունքները, օրինակ, հասարակայնության ավանդը ունի՞ արդյոք իրական ազդեցություն որոշումների փաստացի բովանդակության վրա:			**X**		Թեև քննարկումներում մասնակցում են բազմաթիվ ՀԿ-ներ և անկախ փորձագետներ, սակայն լսումների մեծ մասը վերաբերում է ոչ ռազմավարական հարցերին կամ իրականացվում է որոշում-ների կայացման վերջին փուլում, երբ առկա է միայն աննշան ու կոսմետիկ փոփոխությունների հնարավորություն:
Մշակվե՞լ են արդյոք խթաններ, որոնք պատվիրատուներին հնարավորություն կտան խորհրդակցել հասարակայնության հետ վաղ /նախնական/ փուլերում:				**X**	Ոչ, մշակված չեն:
Արդարադատության մատչելիությունը					
Երկրում գոյություն ունե՞ն անկախ և անաչառ կառույցներ վճիռները բողոքարկելու համար, ներառյալ դատարաններ:		**X**			Դատարանները առկա են, սակայն դատական համակարգի անկախությունը գործադիր իշխանությունից թվացյալ է: Գործում է նաև Մարդու իրավունքի պաշտպանի ինստիտուտը:
Մշակվե՞լ են արդյոք հատուկ կանոններ ֆիզիկական անձանց և ՀԿ-ների իրավունքի վերաբերյալ՝ կոնվենցիայի խախտման և ազգային բնապահպանական օրենսդրության խախտումների			**X**		Ըստ “Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննքրկելու մասին” ՀՀ օրենքի /հոդվ. 11/, ցանկացած անձ իրավունք ունի բողոքով դիմել դատարան, եթե համարում

դատական և այլ քննարկում-ներին մասնակցության հնարա-վորության մասին:					է, որ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների անօրինաչափ գոր-ծողությունների կամա որոշում-ների հետևանքով խախտվել են իր իրավունքները և ազատու-թյունները: Սակայն քաղաքացիները հազ-վագյուտ են դիմում դատարան, հիմնականում չվստահելով գոր-ծող դատական համակարգին:
Մշակվա՞ծ է արդյոք շրջակա միջավայրի համար վտանգավոր որոշման կատարումը կասեցնե-լու մեխանիզմ (օրինակ, նախնա-կան դատական արգելադրում վճռի բողոքարկման ժամանակահատվածում):		X			Այո, սակայն տվյալ դրույթը միշտ չէ իրականացվում պրակտիկայում:
Ստեղծվե՞լ են արդյոք մեխանիզմներ հասարակայնությանը արդաադատու-թյան մատչե-լիության պրոցեդուրայի մասին տեղեկատվություն ներկայացնելու համար:			X		ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի և “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի համաձայն, Վարչական և դատական ընթա-ցակարգերի մատչելիության, համապատասխան մեխանիզ-մների մասին տեղեկատվությունը տրամադրվում է իրավական ակտերի հրապարակման միջո-ցով, ինչպես նաև պետական կա-ռույցների և ՀԿ-ների կողմից տարբեր ուղեցույցների ու տեղե-կագրերի շնորհիվ: Սակայն իրա-կանացվող գործունեություն բավարար չէ:
Մշակվե՞լ են հասարակայնու-թյան համար օգնության մեխա-նիզմներ ընթացակարգերի մատ-չելիության համար, օրինակ, անհրաժեշտության դեպքում իրավաբանի ծառայությունների վճարման համար ֆինանսական աջակցություն:				X	Ոչ, համապատասխան մեխանիզմներ մշակված չեն:
Սահմանո՞ւմ է արդյոք ազգային օրենսդրությունը ժամկետներ գործի քննարկման սկզբից՝ մինչև վճիռ կայացնելը: Եթե այո, ապա ընդունելի՞ է արդյոք պրոցեդուրայի տևողությունը:				X	Ոչ, հաճախ երկարատև լսում-ները իմաստազրկում են դատական պաշտպանության միջոցները, հատկապես վարչա-կան գործերի պարագայում:
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3x հարցերի քանակը):	**30 [0 – 57]**				
Տոկոս	**52,6%**				
Մեկնաբանություններ և բացատրություններ					
Կարելի է փաստել, որ Օրհուսի կոնվենցիան ՀՀ-ում որոշ չափով իրականացվում է: Ընդ որում գրեթե լրիվ իրականացվում է առաջին պիլարը /դրույթը/, երկրորդը իրականացվում է մասնակի / հասարակայնության մասնակցությունը ապահովվում է, բայց ազդեցությունը աննշան է/,					

երրորդի իրականացումը նույնպես խիստ մասնակի է՝ դատավարության մատչելիու-թյունը ապահովված է, սակայն գրեթե չունենք դեպք, երբ դատարանը որոշում է կայացրել էկոլոգիական անվտանգության կամ բնակչության էկոլոգիական իրավունքների պաշտպանության օգտին:

Հարց 10. Շրջակա միջավայրի վիճակի մասին կանոնավոր հաշվետվությունների պատրաստում

Համապատասխան տեքստ Գործողությունների ծրագրում՝

Առաջնային ոլորտ 3.

Խթանել հետագա տնտեսական զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում, այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը:

4.6.4 Բնապահպանություն

Միջոցներ ձեռնարկել բնապահպանության լավ կառավարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար և սկսել դրանց կիրառումը.

- պատրաստել կանոնավոր հաշվետվություններ շրջակա միջավայրի վիճակի մասին,

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Իրականացումը					
Պատրաստվե՞լ է զեկույց շրջակա միջավայրի վիճակի մասին Գործո-ղությունների ծրագրի ստորագրման պահից, թե՞ այն գտնվում է պատրաստման պրոցեսում:				**X**	Ոչ: Շրջակա միջավայրի իրավի-ճակի վերաբերյալ ազգային զեկույցներ պատրաստվել և հրատարակվել են միայն 1993թ. և 2003թ:
Գոյություն ունի՞ արդյոք այդպիսի զեկույցի կանոնավորապես պատ-րաստելու իրավական պահանջ:				**X**	
Պրոցեսը					
Անցկացվե՞լ են արդյոք կոնսուլտա-ցիաներ ՀԿ-ների հետ հաշվետվու-թյան պատրաստման ժամանակ:					
Պրոցեսին ներգրավվե՞լ են գիտնա-կաններ, դասախոսներ:					
Բովանդակությունը					
Շրջակա միջավայրի վիճակի մասին զեկույցը արտացոլո՞ւմ է երկրում բնապահպանական կարևոր հարցերի մեծ մասը:					
Զեկուցը հիմնվո՞ւմ է հավաքած վերջին տվյալների վրա:					
Որոշո՞ւմ է զեկույցը այն լուրջ պրոբլեմները, որոնք լուծում են պահանջում:					
Տարածումը					
Զեկուցը ունի՞ հստակ և հասկանալի ռեզյումե :					
Զեկույցը մատչելի՞ է ինտերնետում:					

Կառավարությունը լայնորեն տարածո՞ւմ է զեկուցի տվյալները մամուլի, բուհերի, դպրոցների և այլ խմբերի համար:					
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	0				
Տոկոս					
Մեկնաբանություններ և բացատրություններ	Գործողությունների ծրագրի ստորագրելուց հետո ՄԱԶԾ-ի /UNDP/ աջակցությամբ հրատարակվել է 2003-2005թթ Նախարարական զեկույցը /որը ներկայացվել է "Շրջակա միջավայր Եվրոպայի համար" Բելգրադի գիտաժողովում, սակայն Շրջակա միջավայրի իրավիճակի վերաբերյալ ազգային զեկույց /SoE/ չի պատրաստվել: UNEP GRID Arendal–ի, ԵԱՀԿ և Թուֆենկյան հիմնադրամի աջակցությամբ 2007թ.-ին պատրաստվել և հրատարակվել է SoE զեկույց Երևանի վերաբերյալ /ռուսերեն/, իսկ 2008թ. հրատարակվել է GEO-Երևան զեկույցի սեղմնագիրը /հայերեն և անգլերեն/: Նշված նախագիծը համակարգվել է "Հանուն Կայուն մարդկային զարգացման" ասոցիացիայի կողմից, մասնակցել են անկախ փորձագետներ,ՀԿ-ներ, Բնապահպանության նախ-ն և Երևանի քաղաքապետարանի աշխատակիցներ:				

Հարց 11. Աջակցություն քաղաքացիական հասարակությանը և իշխանության տեղական մարմիններին:

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Քաղաքացիական հասարակության դերը					
Երկրում ՀԿ-ները կամ ՀԿ-ների ցանցը ակտի՞վ են արդյոք շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:	**X**				ՀՀ բավականին ակտիվ են գործում էկոլոգիական ՀԿ-ները: ՀՀ գործում է "Հասարակական էկոլոգիական դաշինքը", որի մեջ ներկայումս ներառված են 47 ՀԿ-ներ:
Գոյությո՞ւն ունեն արդյոք օրենսդրորեն ամրագրված ընթացակարգեր, որոնք էկոլոգիական հարցերին վերաբերող որոշումներ ընդունելիս պահանջում են ներգրավել քաղաքացիական հասարակությանը:	**X**				Այս հարցը կարգավորող ՀՀ առանձին օրենք առայժմ չկա: Սակայն ՀՀ մի շարք օրենքներում առկա են այս բնագավառը կարգավորող հոդվածներ: Այսպես օրինակ՝ 20.11.1995թ. ՀՀ խորհրդարանի կողմից ընդուն-ված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքի" 10-րդ՝ "Հասարակական լսումների կարգի մասին" հոդվածը և կամ "Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն

					հասա-րակության մասնակցության և արդարադատության մատչելիու-թյան” կոնվենցիան վավերացնելու մասին ՀՀ ԱԺ ՆՆ--175-2 որոշումը, ընդունված 14.05.2001թ. և այլ որոշումներ:
Գործնականում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ-ները ներգրավվո՞ւմ են որոշումներ ընդունելու իրավական պրոցեսին:		X			Լսումների և անկախ փորձագետ-ների օգնությամբ: Այնուամենայ-նիվ ՀՀ-ում ՀԿ-ների ներգրավումը որոշումներ կայացնելու գործընթացների մեջ թույլ է:
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գործնականում մասնակցություն բերո՞ւմ են արդյոք ազգային մակարդակով քաղաքականության մշակմանը:		X			ՀՀ-ում ՀԿ-ների ներգրավումը ազգային մակարդակով քաղաքականության մշակման գործընթացների մեջ թույլ է:
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գործնականում մասնակցություն բերո՞ւմ են արդյոք տեղական մակարդակով քաղաքականության մշակմանը:[1)]			X		ՀՀ-ում ՀԿ-ների ներգրավումը տեղական մակարդակով քաղաքականության մշակման գործընթացների մեջ շատ թույլ է:
ՀԿ-ների նախաձեռնությունները ստանո՞ւմ են արդյոք պետության աջակցությունը (ֆինանսապես կամ ուրիշ միջոցներով):			X		ՀՀ պետական մարմինների կողմից ՀԿ-ներին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն և ապահովվում է համապատաս-խան պաշտոնյաների մասնակ-ցությունը իրականացվող միջոցառումներին, որն, իհարկե, բավարար չէ:
Եթե այո, ապա ավելացե՞լ է արդյոք այդ աջակցությունը նախորդ գնահատման ժամանակից:				X	
Տեղական իշխանության մարմինների /կառույցների/ դերը					
Կանոնավորապե՞ս են արդյոք համագործակցում տեղական իշխա-նության մարմինները քաղաքացիա-կան հասարակության ներկայացու-ցիչների հետ:		X			Տեղական իշխանությունները տեղական ՀԿ-ների հետ բավա-կանին կանոնավոր կոնտակտ-ների մեջ են: Իսկ մնացած ՀԿ-ների հետ կոնտակտները հնարա-վոր են, երբ իրականացվում է որևէ տեղական նշանակության ծրագիր:
Տեղական իշխանության մարմին-ները ազատորեն տրամադրո՞ւմ են տեղեկատվություն քաղաքացիա-կան հասարակության ներկայա-ցուցիչներին:		X			Այո, բայց ոչ բավարար չափով:
Շփումների ռազմավարությունները և ուրիշ միջոցներ					
Երկրում ստեղծվե՞լ են արդյոք բնապահպանական հարցերի շուրջ շփումների ռազմավարություններ: Եթե նրանք արդեն գոյություն ունեին հետազոտության սկսման պահից, ապա բարելավվե՞լ են		X			ՀՀ կառավարության N1682-Ն որոշմամբ, ընդունված 02.12.2004թ., ՀՀ բոլոր նախա-րարություններում ստեղծվել են հասարակության հետ կապերի վարչություններ: Ներկայումս ՀՀ

[1)] Միգուցե դժվար է գնահատել տեղական իշխանության յուրաքանչյուր օրգանի մակարդակը: Այդուհանդերձ, փորձագետը պետք է հնարավորություն ունենա ստանալու իրավիճակի ընդհանուր տեսությանը՝ պաշտոնական հաշվետվություններից ինֆորմացիայի հետ շփումների միջոցով:

արդյոք դրանք այդ ժամանակվանից ի վեր:					բնապահպանության նախարարության հասարակության հետ կապերիի վարչությունը բավականին ակտիվ կապի մեջ է ՀԿ-ների հետ:
Արդյոք, մշակ՞վել ու ներդր՞վել են քաղաքացիական հասարակության տեղեկացվածությունը մեծացնելու ծրագրեր (ներառյալ տեղեկատվական կամպանիաները):		**X**			Ներկայումս ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, ԵԱՀԿ-ի հետ համատեղ, ՀՀ շրջաններում լուրջ աշխատանքներ են իրականացվել բնապահպանական տեղեկատվության հասարակական ինֆորմացիոն /"Օրհուսի"/ կենտրոնների հիմնադրման հարցում:
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները երկրում տարած՞ում են էկոլոգիական գիտելիքներ /իրականացնում բնապահպանական ծրագրեր/:	**X**				ՀՀ-ում գործում է "Բնակչության բնապահպանական դաստեարակության և կրթության մասին ՀՀ օրենքը" / ընդունվել է 20.11.2001թ./: Ամեն տարի ՀՀ բնապահպանական ՀԿ-ները իրականացնում են մեծ թվով տարբեր ձևաչափերի էկոլոգիական ճանաչողական, ուսուցողական և այլ միջոցառումներ, դրանում ավելի ու ավելի ներգրավելով ՀՀ հասարակության նորանոր անդամների էկոլոգիական շարժման մեջ: Ամեն տարի ՀՀ-ում բնապահպանական ՀԿ-ների կողմից տպագրվում և տարածվում են բնապահպանական ուղղվածության ճանաչողական և ուսուցողական գրքեր, բրոշուրներ, պլակատներ:
Եթե այո, ապա դրանում նրանց աջակցո՞ւմ են արդյոք իշխանության կառույցները:		**X**			ՀՀ իշխանությունները ՀԿ-ներին օգնություն են ցուցաբերում ինֆորմացիա տրամադրելով և իրականացվող միջոցառումներին իրենց ակտիվ մասնակցությամբ:
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	28 [0-42]				
Տոկոս	66,7%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 12. Հարևան երկրների հետ համագործակցության ուժեղացումը

Առաջնային ոլորտ 8.

Ավելացնել ջանքերը տարածաշրջանային համագործակցության բնագավառում:

Հատուկ գործողություններ.

- գործադրել բոլոր ջանքերը չկարգավորված սահմանային վեճերի և հարակից խնդիրների կարգավորման համար և խրախուսել հարևանների հետ հաշտությունը: Ընդլայնել մասնակցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններում, օրինակ՝ շրջակա միջավայրի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում,
- շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառում՝ Սևծովյան/Կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում: Զարգացնել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում տարածաշրջանային իրավապահպանության բնագավառի համագործակցության նախաձեռնություններում, ներառյալ ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնություններում, ինչպիսին է օրինակ SCAD-ը (Հարավային Կովկասի թմրանյութերի վերաբերյալ գործողությունների ծրագիր),
- աջակցել Բնապահպանության կովկասյան տարածաշրջանային կենտրոնին՝ տարածաշրջանի կառավարական և հասարակական կազմակերպությունների համագործակցության զարգացման գործում, ինչպես նաև ակտիվացնել մասնակցությունը կենտրոնի աշխատանքներում,
- ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում, որը կներառի ՍԾՏՀ-ի հետ շարունակական հարաբերման միջոցով խորացված տարածաշրջանային տնտեսական համագործակցություն, և Սևծովյան և Բալթյան տարածաշրջանների միջև,
- ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը:

Այս առաջնայնությունների ուղղությամբ առաջընթացին կհետևեն Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ստեղծված մարմինները, Եվրոպական հանձնաժողովը կպատրաստի միջնաժամկետ զեկույց արձանագրված առաջընթացի վերաբերյալ: Այդ գնահատականի հիման վրա ԵՄ-ն Հայաստանի հետ միասին կվերանայի Գործողությունների ծրագրի բովանդակությունը և որոշում կկայացնի դրա արդիականացման և նորացման վերաբերյալ: Հինգ տարվա ժամկետի ավարտին մոտ Հանձնաժողովը կհրապարակի երկրորդ զեկույցը, որի հիման վրա կարող է որոշում կայացվել երկկողմ հարաբերությունների զարգացման հետագա քայլի, այդ թվում՝ նոր պայմանագրային կապեր հաստատելու հնարավորության վերաբերյալ:

Հարցը	այո			ոչ	ծանոթագրություններ
	գերազանց	լավ	բավարար		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Հարևան երկրների հետ համագործակցության գոյություն ունեցող կամ հնարավոր համաձայնագրերը					
Գործնականում ստեղծվա՞ծ են արդյոք համաձայնագրով նախատեսված կառույցներ:		**X**			1. Նախկինում Կովկասի տարածաշրջանում բնապահպանական ոլորտի համագործակցությունը իրականացվում եր Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի /ԿՏԲԿ, REC/ շրջանակներում կնքված համաձայնագրի և դրան համապատասխան իրականացվող գործունեության միջոցով: ԿՏԲԿ-ի հետագա գործունեու-թյան և դրա շրջանակներում համագործակցության հարցի շուրջ

					վերջին տարիներին տեղի է ունեցել բանակցային գործընթաց ԵՄ միջազգային հարաբերություն-ների վարչության և ԿՏԲԿ-ի տնօրինության միջև: 2009թ. նախատեսվում է Գործա-դիր մարմնի ներկայացուցիչների համապատասխան աշխատան-քային պայմանագրերի /կոնտ-ռակտների/ ստորագրումը՝ ԿՏԲԿ-ի գործառնական աշխատանք-ների արդյունավետությունը ապահովելու նպատակով: 2. ՀՀ կառավարության և Վրաս-տանի Կառավարության միջև 03.05.1997թ. ստորագրվել է «Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բնագավառում համագործակ-ցության մասին համաձայնագիր : 3. 05.11.2002թ. ստորագրվել է «ՀՀ բնապահպանության նախարա-րության և ՌԴ բնական ռեսուրս-ների նախարարության միջև ընդերքի և ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտներում, համագործակցության մասին» համաձայնագիրը :
Այդ կառույցները պատշաճ ձևով գործու՞մ են արդյոք (օրինակ, տեղի ունենո՞ւմ են կանոնավոր հանդի-պումներ, կամ ընդունվում որոշում-ներ և այլն):	**X**				1.ԿՏԲԿ շրջանակներում պարբե-րաբար կազմակերպվում են թեմատիկ և կազմակերպչական հանդիպումներ, նաև իրականաց-վող ծրագրերի շրջանակներում: 2. Վրաստանի հետ համագոր-ծակցության համաձայնագրի դրույթները իրականացվում են տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում: Բացի այդ, Ջավախք-Շիրակի պլատոյում ստեղծվել է անդր-սահմանային պահպանվող տարածք: Հայաստանի մասում դա “Արփի լիճ” ազգային պարկն է 60 000 հա տարածքով: 3. ՀՀ և ՌԴ միջև համաձայնագրի շրջանակներում ստեղծվել է հա-մատեղ աշխատանքային խումբ՝ համաձայնագրի դրույթները իրագործելու նպատակով:
Նախատեսու՞մ է համաձայնագիրը տեղեկատվության փոխանակումը: Արդյունավե՞տ է արդյոք դրա իրականացումը:	**X**				1. ԿՏԲԿ-ի հիմնական նվաճում-ներից է բնապահպանական տեղեկատվության տարածումը: 2. Տեղեկատվությունը փոխանակ-վում է նամակագրության միջո-ցով, հանդիպումների ժամանակ, նաև երկրների նախարարություն-ների

					վեբ-կայքում տեղադրված տեղեկատվության միջոցով:
Արվե՞լ են համաձայնագրով նախատեսված ֆինանսական ավանդներ:				X	Ոչ
Ազգային մակարդակով արվե՞լ են քայլեր համաձայնագրի իրականացման համար:		X			Համաձայնագրերի իրականացումը նախատեսում է ազգային մակարդակով գործունեություն
Պլանավորվա՞ծ է արդյոք համաձայնագրի ստորագրումը հարևան երկրների հետ համագործակցության մասին:		X			Այլ հարևան երկրներից համագործակցության, փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Իրանի հետ, որի դրույթները իրականացվում են համաձայն մշակած ժամանակացույցի: Այլ հարևան երկրների հետ ներկա դրությամբ համագործակցության պայմանագրի կնքումը նախատեսված չէ:
Եթե այո, ապա բանակցությունների պրոցեսը արդյունավե՞տ է արդյոք:			X		
Ոչ պաշտոնական համագործակցությունը					
Ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով կազմակերպե՞լ են արդյոք հանդիպումներ անդրսահմանային-տարածաշրջանային հարցերով:			X		Անդրսահմանային հարցերով հանդիպումներ կազմակերպվում են Կովկասի տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում /ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, հատուկ պահպանվող տարածքների հարցերի շուրջ, և այլն/: Անդրսահմանային ջրերի հարցերով գործնական հանդիպումներ պարբերաբար կազմակերպվում են Իրանի հետ համագործակցության շրջանակներում:
Իրականացվե՞լ է արդյոք ինֆորմացիայի փոխանակություն ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակներով:			X		Տեղեկատվության փոխանակումը ապահովվում է սեմինարների, կլոր սեղանների, ուսուցողական սեմինարների, կոնֆերանսների ժամանակ: Տեղեկատվության փոխանակման հարցում մեծ դեր է պատկանում Հայաստանում գործող 12 “Օրհուսի” կենտրոններին /բնապահպանական տեղեկատվական կենտրոններին/: Տեղեկատվությունը տրամադրվում է ինտերնետի միջոցով /էլեկտրոնային կայքեր՝ ՀՀ բնապահպանության նախարարության, և այլն/, էլեկտրոնային կապի/ցանցերի միջոցով՝ Կովկասի բնապահպանական տարածաշրջանային կենտրոնի /ՏԲԿ/, ՏԲԿ-ի հայաստանյան գրասենյակի, առանձին ՀԿ-ների: Կազմակերպվում են հեռուստահաղորդումներ, հրատարակվում են տեղեկատվական նյութեր՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, իրա-

					կանացվող ծրագրերի շրջանակ-ներում և այլն:
Արվե՞լ են արդյոք քաղաքական հայտարություններ տարածա-շրջաային համագործակցության վերաբերյալ:			X		-Տարածաշրջանային համագոր-ծակցությունը իրականացվում է հիմնականում Կովկասի տարա-ծաշրջանային բնապահպանա-կան կենտրոնի /ՏԲԿ/ գործու-նեության շրջանակներում: Համագործակցության հիմքերը և ձևերը ամրագրված են ՏԲԿ-ի կանոնադրությունում: - 2000թ.-ից միջազգային կազմակերպությունների հետ բանակցություններ են տարվում՝ Կովկասի տարածաշրջանի էկոհամակարգերի պահպանության հարցերով Կովկասի կոնվենցիայի մշակման հետ կապված:
Գոյություն ունե՞ն արդյոք տարածաշրջանային համատեղ նախագծեր, ներառյալ համատեղ գործունեությունը երկու երկրներից շահագրգիռ կողմերի համար:		X			Կովկասյան նախաձեռնության «Բնության և կենսաբազմազանության պահպանության» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում իրականացվում է՝ Ջավախքի պլատոյում պահպանվող տարածքների ստեղծում» օրակարգը: Արևմտյան ԱԵԿԿԱ երկրներում ջրերի կառավարման ծրագիր /Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա և Կովկասի երկրներ/: «Քուռ-Արաքսյան գետավազանի անդրսահմանային կառավարում» ծրագիր, ներկայումս իրակա-նացվում է ծրագրի 2-րդ փուլը:
Տարածաշրջանային-տեղական վարչակազմերը կամ այլ շահագր-գիռ կողմերի կանոնավորապե՞ս են համագործակցում բնապահպանա-կան հարցերի շուրջ:		X			
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	20 [0-36]				
Տոկոս	55,5%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 13. Քաղաքականության այլ ոլորտների էկոլոգիական /բնապահպանական/ հարցերի ինտեգրացման ապահովումը (աջակցությունը կայուն զարգացմանը)

Առաջնային ոլորտ 3.

Խթանել հետագա տնտեսական զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում, այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը:

4.3 Տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, աղքատության նվազեցում և կայուն զարգացում

Կայուն զարգացման խթանում.

- մշակել Կայուն զարգացման ազգային ռազմավարությունը ,
- ստեղծել վարչական կառույցներ և ընթացակարգեր՝ ապահովելու համար կայուն զարգացման ռազմավարական ծրագրավորումը և շահագրգիռ մարմինների գործունեության համակարգումը,
- քայլեր ձեռնարկել բարելավելու համար բնապահպանական խնդիրների ինտեգրացումը քաղաքականության այլ ոլորտներում:

Հարցը	այո			ոչ	ծանոթագրություններ
	գերազանց	լավ	բավարար		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Շրջակա միջավայրի ինտեգրումը սեկտորալ քաղաքականություն					
ՀՀ Կառավարությունում. ստեղծվե՞լ են ընդհանուր կոմիտեներ կամ արվե՞լ են այլ քայլեր շրջակա միջավայրը սեկտորալ քաղաքականությունում ինտեգրելու համար:		**X**			ՀՀ Կայուն զարգացման խորհուրդը ստեղծվել է 2002թ. բայց երբեք չի գործարկվել: Այն սկսել է գործել 2008թ.:
Պլաններ և ծրագրեր. ընդունվե՞լ է արդյոք որևէ ընդհանուր քաղաքականություն:		**X**			Ստեղծված են համապատաս-խան ծրագրեր էներգետիկայի և տրանսպորտի ոլորտների համար: ԿԶ ազգային հայեցա-կարգը ստեղծվել է 2002թ. հասարակական և գիտական սեկտորների կողմից /համակար-գող՝ "Հանուն ԿՄԶ" ասոցիացիա/, նախարարությունների ներկայա-ցուցիչների մասնակցությամբ: Այն ընդգրկվել է ՀՀ "Ռիo+10" ազգային զեկույցում, սակայն պաշտոնապես չի հաստատվել ՀՀ Կառավարության կողմից:
Ազգային ռազմավարության նախապատրաստումը					
Ընդունվե՞լ է արդյոք կայուն զարգացման ազգային ռազմավարություն Գործողությունների ծրագրի ստորագրման պահից:			**X**		Ընդունված է ՀՀ կայուն զարգաց-ման ծրագիրը, սակայն այն ստեղ-ծվել է ԱՀՌՕ հիման վրա, առանց անհրաժեշտ վերամշակման: Այն լիարժեք չի արտացոլում էկոլոգիական առաջնայնու-թյունների ընդգրկումը սեկտորալ քաղաքանության մեջ, սակայն պարունակում է պահաջվող մոտեցման որոշակի տարրեր:

Եթե ոչ, ապա այդ ռազմավարությունը մշակվու՞մ է, թե ոչ:					
Գործընթացը					
Նախարարությունները տարբեր ոլորտներում արդյո՞ք ակտիվ դեր են խաղացել ռազմավարության նախապատրաստման գործում:		**X**			Այո, սակայն ՀՀ Բնապահպանության նախարարության մասնակցությունը թերագնահատվել է:
Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները տարբեր ոլորտներում / բնապահպանական ՀԿ-ներ, արդյունաբերողներ, այլ/ խաղացե՞լ են արդյոք ակտիվ դեր:	**X**				Գործընթացի մասնակցային բնույթը լրիվ ապահովված էր:
Իրականացում					
Արվե՞լ են քայլեր այդ ռազմավարության գործողություններն իրականացնելու համար:			**X**		Գործընթացը նոր է սկսվել:
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև... (3 x հարցերի քանակը):	**11 [0-18]**				
Տոկոս	**61,1%**				
Մեկնաբանություններ և բացատրություններ	ՀՀ Կառավարության կողմնո-րոշումը դեպի կայուն զարգացում տեղի է ունեցել ՀԿ-ների նախաձեռնությամբ, որոնք դիմել էին ՀՀ ներկայիս Վարչապետին գործընթացը ակտիվացնելու առաջարկով:				

Հարց 14. Կիոտոյի արձանագրության և Կլիմայի փոփոխման ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների իրականացումը

Ծրագրի նպատակն է անդրադառնալ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի խնդիրներն՝ Հայաստանի առաջին ազգային զեկույցում նշված ռազմավարությանը համապատասխան։ Ծրագիրը առաջին ազգային զեկույցի ներքո իրականացված աշխատանքների, ներառյալ առաջնային բնագավառներում կարողությունների ստեղծման և ինքնագնահատման վարժությունների շարունակությունն է: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են՝

ա) Հայաստանի երկրորդ ազգային զեկույցի պատրաստում և ներկայացում՝ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի 12 հոդվածին համապատասխան, ներառյալ. (i) ազգային պայմանների նկարագրություն, (ii) ջերմոցային գազերի ազգային կադաստր, (iii) խոցելիության գնահատում և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը նպաստող միջոցառումներ, (iv) Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման հնարավոր միջոցառումների վերանայում, (v) հզորությունների ստեղծում՝ բնապահպանական տեսանկյունից անվտանգ տեխնոլոգիաների և "նոու-հաու"-ների մշակման, փոխանցման և գնահատման, ինչպես նաև դրանց ներդրման և ինքնուրույն ծրագրերի իրականացման համար, (vi) կլիմայի փոփոխության հետազոտությունների և սիստեմատիկ դիտարկումների վերաբերյալ տեղեկատվության նորացում.

բ) Հայաստանում կլիմայի փոփոխության հիմնախնդիրների վերաբերյալ հանրային իրազեկում և գիտելիքների խորացում.

գ) կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման վերաբերյալ ծրագրերի նույնականացում և ձևակերպում.

դ) ազգային հզորությունների ստեղծում՝ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո երկրի ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված տարբեր մեխանիզմներին մասնակցելու համա

Հայաստանը վերջին տարվա ընթացքում ակտիվացրել է համագործակցությունը ԵՄ մի շարք երկրների հետ՝

- «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության իրականացման նպատակով Հայաստանը ստորագրել է «Հայաստանի Հանրապետության և *Դանիայի Թագավորության* կառավարության միջև համագործակցության վերաբերյալ» Փոխըմբռնման հուշագիր, որը բացում է լայն ասպարեզ ներդրումային նախագծեր իրականացնելու հարցում Դանիական կողմի ինչպես պետական այնպես էլ մասնավոր սեկտորի ֆինանսական միջոցներով:

Հայաստանը, որպես զարգացող երկիր, որը չի ընդգրկված Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի I Հավելվածում, չունի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման պարտավորություններ: Սակայն Կոնվենցիայի նպատակների իրականացման մեխանիզմների համապատասխան շրջանակներում, զարգացած երկրների կողմից աջակցություն ստանալու դեպքում, նա կարող էր կամավոր վերցնել արտանետումների կրճատման պարտավորություններ: Դրա հետ կապված մշակվել է արտանետումների սահմանափակման ռազմավարություն, որի հիմքում ընկած են Հայաստանի էներգետիկ համակարգի մինչև 2010 թ. ընկած ժամանակաշրջանի համար մշակված հեռանկարային զարգացման ծրագրի հիմնական դրույթները:

Հայաստանում Եվրամիության հետ համագործակցության շրջանակներում ՄԶՄ 16 ծրագրերից ՄԶՄ Գործադիր կոմիտեում գրանցվել են 4 ծրագիր, ևս 3 ծրագրեր ընդունվել են ՄԶՄ Ազգային լիազոր մարմնի կողմից, 1 ծրագրի վերաբերյալ ստացվել է ՄԶՄ Ազգային լիազոր մարմնի հավանությունը և 8 ծրագիր մշակման փուլում են: Հաստատված ծրագրերից մեկի մշակումը սկսվել է 2001 թ., այն է՝ Բիոգազի ստացումը Նուբարաշենի աղբավայրում: Այս ծրագիրը լիազոր մարմնի կողմից հաստատվել էր 2005թ., սակայն դրա իրականացումը նոր է սկսվում: Մնացած հաստատված ծրագրերի մշակումը սկսվել է 2005 թ. և ավելի ուշ, իսկ հաստատումը կատարվել է 2007-2008 թթ.:

Միաժամանակ հարկ է նշել, որ, ցավոք, երկրում տարիների անտառահատումների արդյունքում կրճատվել են անտառածածկ տարածքները, իսկ մայրաքաղաք Երևանում կանաչապատ տարածքները կրճատվել են համատարած կառուցապատման հետևանքով: Նշված երևույթները խորացնում են կլիմայի փոփոխության և անապատացման զարգացման գործընթացները:

Հարցը	**այո**			**ոչ**	**ծանոթագրություններ**
	գերազանց	**լավ**	**բավարար**		
Գնահատականը	**3**	**2**	**1**	**0**	
Իրականացումը					
Երկրում գոյություն ունի՞ արդյոք ջերմոցային գազերի արտանետումների մոնիտորինգի համակարգ:		**X**			Կատարվել է Ջերմոցային գազերի հաշվառում 1990թ., 1994-1996 թթ. համար /Առաջին ազգային հաշվետվություն/: 2000թ., 1996-2006թթ. կտրվածքով Ջերմոցային գազերի հաշվառումը ընթացքի մեջ է /Երկրորդ ազգային հաշվետվություն/: ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիայի շրջանակներում Հայաստանը պատասխանատվություն չի կրում յուրաքանչյուր տարի վերանայելու ջերմոցային գազերի ցանկը:
Երկիրը օգուտ ստացե՞լ է Մաքուր զարգացման մեխա-նիզմից (Մաքուր զարգաց-ման մեխանիզմի գործունե-		**X**			Հայաստանում իրականացվում են 4 ծրագրեր, ևս երեք ծրագիր հաստատված են ՄԶՄ Ազգային կենտրոնի կողմից, 5 ծրագիր մշակման փուլում են /4՝ PDD և 1

ությանը մասնակցելը I Հավելվածի երկրների համար չէ): Մասնավորապես, իրագործվե՞լ են արդյոք մեխանիզմի իրականացման նախագծերը:					ծրագիր՝ PIN փուլում/: Սակայն ցանկալի է, որ իշխանական կառույցները ավելի նախաձեռնող լինեն այս հարցում:
Ձևակերպվե՞լ են ծախսերի իմաստով արդյունավետ ազգային կամ տարածաշրջանային ծրագրեր՝ տեղական արտանետումների գործոնների բարելավման համար, գործունեության մասին տվյալների կամ մոդելների և ռեգիստրի նորացման համար:	X				Ջերմոցային գազերոի հաշվառումը հեշտացնելու նպատակով մշակվել է «Ջերմոցային գազերի հաշվառման տվյալների ինտերֆեյս» ծրագրավորման ապահովումը:
Գոյություն ունե՞ն ազգային և տարածաշրջանային ծրագրեր (կամ պլանավորվո՞ւմ են), որոնք պարունակում են միջոցառումներ կլիմայի փոփոխման հետևանքները մեղմելու ուղղությամբ (օրինակ, սեկտորալ ծրագրեր էներգետիկայի, տրանսպորտի, թափոնների, հողի օգտագործման, արդյունաբերության, տնային տնտեսության, շինարարության կամ հատուկ տեխնոլոգիաների, ինչպես էներգիայի խնայողություն կամ վերականգնվող էներգետիկա (հոդ.. 4.1 (Ջ):			X		Այո, ունեն՝ - Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարելավում UNDP/GEF Project (2005-2009); - Կլիմայի փոփոխության Հայաստանի երկրորդ ազգային զեկույցի պատրաստման համար նպաստավոր պայմանների ստեղծում UNDP/GEF նախագիծ (2007-2009); - Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնաանտառային էկոհամակարգերի հարմարվողականություն UNDP/GEF նախագիծ (2008-2012); - Աջակցություն Կիոտոյի արձանագրության իրականացմանը TACIS ռեգիոնալ նախագիծ (2008-2011): Սակայն քաղաքաշինության ոլորտում նշված քաղաքականությունը չի իրականացվում, ավելին քաղաքներում, ըատկապես Երևանում շինարարությունը հաճախ կատարվում է կանաչ տարածքների հաշվին: Վտանգված են նաև լեռնաանտառային էկոհամակարգերը անտառհատումների հետևանքով / ներառյալ հատումներ բաց եղանակով համքարդյունահանման իրականացման համար/
Պրակտիկայով և պրոցեսներով փոխանակման և զարգացման ուղղությամբ երկիրը արե՞լ է արդյոք քայլեր՝ արտանետումների վերահսկման և կլիմայի փոփոխությանը խոչընդոտելու համար (հոդ. 4.1 (e), (d), (h)):	X				Հայաստանի նվաճումների և լավագույն փորձի վերաբերյալ ներկայացվել են զեկույցներ մի շարք միջազգային ֆորումների ժամանակ՝ - ՄԱԿ-ի «կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիայի կողմերի 14-րդ կոնֆերանս, Լեհաստան, 2008թ., - “Աշխածնի ֆորում”, Ասիա, Սինգապուր, 2008թ., այլն:
Ընդունվե՞լ են արդյոք պլաններ կլիմայի		X			«Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող Հայաստանի

փոփոխությանը հարմարվելու համար (ափամերձ գոտի, ջրային պաշարներ) (հոդ. 4.1 (e)):					Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 2-ի N 1840-Ն որոշում «Երեք գլոբալ՝ «Կենսաբազմազանու-թյան մասին», «Կլիմայի փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիաներից բխող խաչա-ձևվող խնդիրների իրականացման միջոցա-ռումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16.06.2005 թ. N 880-Ն որոշումը: Սակայն այդ որոշումների իրականացումը լիարժեք չէ:
Եղե՞լ են արդյոք նախաձեռնություններ կլիմայի փոփոխության հարցերի շուրջ հասարա-կայնության տեղեկացվածությունը մեծացնելու համար (հոդ. 4.1 (i)) (օրինակ, տրենինգային ծրագրեր):	X				Ազգային գործողությունների նախնական փուլ որպես «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի կրթության, ուսուցման և հանրային իրազեկության մասին 6-րդ հոդվածի ազգային իրազեկության մաս» նախագիծ, /ՄԱԿ-ի ՇՄԾ և ՀՀ բնապահպանության նախարարություն/:
Հաշվետվություն					
Ունի՞ արդյոք երկիրը անտրոպոգեն արտանե-տումների ազգային կադաստրների համակարգ (կոնվենցիայի 4.1 (a) հոդ.):	X				Ջերմոցային գազերի կադաստրը նախա-պատրաստվում է համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում/ օր.՝ «Առաջին ազգային զեկույց», «Տեխնո-լոգիական կարիքների գնահատում», «Երկրորդ ազգային զեկույց»/:
Եթե այո, ապա դրանք արդյո՞ք թարմացվում և հրապարակվում են պարբերաբար:		X			Թարմացվում և հրապարակվում է համա-պատասխան ֆինանսավորման առկայու-թյան դեպքում /տես տվյալները վերևում/:
Եթե երկիրը ազգային հաղոր-դագրություն է տալիս կլիմա-յի փոփոխության ՄԱԿ-ի Կոն-վենցիայի Քարտուղարու-թյուն, ապա տալի՞ս է այն կանոնավորապես: Մասնավորապես, եթե արվել է նախնական հաղորդագրո-ւթյուն, ապա ձեռնարկվե՞լ են արդյոք միջոցներ երկրորդ հաղորդագրությունը պատրաստելու համար:	X				Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի իրականացման շրջանակներում Հայաստանի Առաջին ազգային զեկույցը ներկայացվել էր կոնվենցիայի քարտուղարություն 1998 թ.: Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ երկրի երկրորդ ազգային զեկույցը մշակման փուլում է: Դրա ավարտը նախատեսվում է 2009 թ. վերջին:
Հաղորդագրությունները պա-րունակո՞ւմ են տեղեկա-տվություն իրենց իրավական պարտականությունների իրականացման համար կա-տարված կամ պլանա-վորված քայլերի մասին:	X				Այո, Հայաստանի առաջին ազգային զեկույցում տեղադրված է տեղեկատվություն երկրի ստանձնած պարտականությունների կատարման ուղղությամբ իրականացվող և նախատեսվող միջոցառումների վերաբերյալ:
Արե՞լ է երկիրը առաջար-կություններ Քարտուղա-րությանը կամավորության հիմունքով նախագծերի ֆի-	X				Այո, առաջարկությունները ներկայացվել են Հայաստանի առաջին ազգային զեկույցում:

նանսավորման վերաբերյալ՝ արտանետումների պակասեցման համար:					
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Կօգտագործի՞ արդյոք երկիրը համատեղ իրականացման մեխանիզմը:					Համատեղ իրականացման մեխանիզմը նախատեսված չէ Հայաստանի՝ 1-ին հավելվածում չընդգրկված երկրի համար:
Երկիրը օգտվո՞ւմ է արդյոք արտանետումների առևտրից:					Նախատեսված չէ Հայաստանի՝ 1-ին հավելվածում չընդգրկված երկրի համար:
Արե՞լ է երկիրը քայլեր զարգացող երկրներին աջակցելու համար (օրինակ, տեխնոլոգիաների համատեղ օգտագործում, ֆինանսական աջակցություն):					Նախատեսված չէ 1-ին հավելվածում չընդգրկված երկրների համար:
Երկիրը օգուտ ստացե՞լ է Մաքուր զարգացման մեխանիզմից (արտանետումների սերտիֆիկացված պակասեցման համար):		**X**			ՄԶՄ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տրված է հարցաշարի սկզբում: Սակայն պետք է նշել, որ, մասնավորապես, Նուբարաշենի աղբավայրի արտանետումների հավաքման և օգտագործման ուղղությամբ Ճապոնական նախագծի վերաբերյալ պայմանագրի կնքումը չափազանց ուշացվեց ՀՀ իշխանությունների կողմից:
Ամեն տարի՞ է թարմացվում և հրապարակվում անտրոպոգեն արտանետումների ազգային կադաստրը:		**X**			Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում վերանայվել է և հրատարակվել:
Տվե՞լ է երկիրը քաղաքականության և իր պարտավորությունների իրականացման համար միջոցառումների և Քարտուղարությանը իր հաղորդագրությունների արդյունքների նկարագրությունը:	**X**				Այո, համապատասխան նկարագրությունը ներկայացված է Առաջին ազգային զեկույցում:
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև..(3x հարցերի քանակը):	36 [0-45]				
Տոկոս	80,0%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					

Հարց 15. էներգետիկ և տրանսպորտային քաղաքականության կայունության բարելավումը

4.6. Համագործակցություն հատուկ բնագավառներում, ներառյալ տրանսպորտը, էներգետիկան և բնապահպանությունը

4.6.1. Տրանսպորտ

Մշակել և սկսել իրագործել տրանսպորտի ազգային ռազմավարություն, ներառյալ տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացումը.

- սկսել մշակել տրանսպորտի երկարատև ազգային քաղաքականություն, անհրաժեշտության դեպքում կենտրոնանալով եվրոպական և միջազգային չափանիշներին օրենսդրական և կարգավորող մեխանիզմների հետագա մոտարկման վրա, հատկապես՝ անվտանգության և ապահովության հարցերում (տրանսպորտային բոլոր տեսակների համար),
- ամրապնդել Նախարարության կարգավորող և ոլորտի վերահսկման կարողությունները,
- ճանապարհների ֆինանսավորման երկարաժամկետ և թափանցիկ համակարգի ստեղծում՝ գոյություն ունեցող հանրային օգտագործման ճանապարհները պատշաճ վիճակում պահելու համար,
- զարգացնել համագործակցությունն արբանյակային նավիգացիայի ոլորտում (ներառյալ համատեղ հետազոտական գործողությունները և կիրառումները):

Կիրառել ընտրված միջոցներ և բարեփոխումներ ճանապարհային տրանսպորտի ոլորտում.

- մշակել և կիրառել ճանապարհային անվտանգության գործողությունների ծրագիր, (ներառյալ, ի թիվս այլոց ճանապարհային փոխադրումների ապահովության և անվտանգության, հանրության ապահովության, վտանգավոր նյութերի տեղափոխման, ինչպես նաև փոխադրամիջոցների ավտոճանապարհային պիտանելիությունը) ճանապարհային անվտանգությունը բարելավելու համար:

Կիրառել ընտրված միջոցներ և բարեփոխումներ երկաթուղային տրանսպորտի ոլորտում.

- բարելավել երկաթուղային ծառայությունների անվտանգությունը, արագությունը և արդյունավետությունը (փոխգործողունակությունը) և շարունակել բարեփոխումներն օպերատիվ և ֆինանսական կառավարման ասպարեզում:

4.6.2 Էներգետիկա

Էներգետիկ քաղաքականության համապատասխանեցումը ԵՄ էներգետիկ քաղաքականության նպատակներին.

- ուսումնասիրել Intelligent Energy-Europe ծրագրում մասնակցելու միջնաժամկետ հնարավորությունը:

Աստիճանական համապատասխանեցում ԵՄ էլեկտրականության և գազի ներքին շուկաների սկզբունքներին.

- հաստատել միջոցառումների ցանկ՝ ԵՄ էլեկտրականության և գազի ներքին շուկաների սկզբունքներին իրավական և կարգավորող դաշտի աստիճանական համապատասխանեցման նպատակով, կցված հստակ ժամանակացույցով և ֆինանսավորման ծրագրով,
- առավել զարգացնել Հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովը՝ 2003/54 և 2003/55 էլեկտրականության և գազի դիրեկտիվների սկզբունքներին համապատասխան,
- շարունակել էլեկտրականության, գազի և ջեռուցման համակարգերի զարգացումը, այդ թվում բազիսային ծանրաբեռնվածության հնարավորությունն ապահովող նոր հզորությունները, ապահովել ոլորտի ֆինանսական կենսունակությունը:

Էներգացանցերի բնագավառի կատարելագործում (մասնավորապես էլեկտրականության և բնական գազի)

- քայլեր ձեռնարկել էներգացանցի կորուստները պակասեցնելու ուղղությամբ,
- բարելավել էներգետիկ համակարգերի ապահովությունը և անվտանգությունը,
- Մեծամորի ատոմակայանի վաղաժամկետ փակման համատեքստում, շարունակել էներգետիկ ցանցերի և ենթակառուցվածքների զարգացումը (օր. գնահատել նոր ցանցերի և միջցանցային կապերի հնարավորությունը, կառուցել գազի ստորգետնյա պահեստարան):

Էներգիայի արդյունավետ օգտագործման և վերականգնվող էներգիայի աղբյուրների ասպարեզում առաջընթաց.

- քայլեր ձեռնարկել գործողությունների ծրագիր մշակելու ուղղությամբ, ընդգրկելով էներգիայի արդյունավետ օգտագործման բարելավմանն ու վերականգնվող էներգիայի

աղբյուրների, ներառյալ հիդրոէներգիայի, օգտագործման խրախուսմանն ուղղված ֆինանսական և օրենսդրական ծրագիր, ինչպես նաև տնտեսական մեխանիզմներ,
- ամրապնդել էներգիայի արդյունավետ օգտագործման ու վերականգնվող էներգիայի աղբյուրների խնդիրներով զբաղվող հաստատությունները,
- կիրառել մի շարք միջոցառումներ այդ բնագավառում:

Շարունակել համագործակցությունը միջուկային էներգիայի և միջուկային անվտանգության բնագավառներում.
- միջոցներ ձեռնարկել բոլոր տեսակների ռադիոակտիվ աղբյուրների վերահսկողությունն ուժեղացնելու ուղղությամբ, ներառյալ դրանց և որևէ այլ ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով:

Երևանում առկա է մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածություն: Այսպես՝ ըստ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների 2007թ. Երևանում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան թույլատրելի նորման գերազանցել է՝ 1,5, ծծմբի երկօքսիդինը՝ 1,2, ազոտի երկօքսիդինը՝ 2,5, գետնամերձ օզոնինը՝ 1,6 անգամ:

2007թ. ցուցանիշներով ավտոտրանսպորտի արտանետումները հանրապետությունում կազմել են ընդհանուր հաշվառված արտանետումների մոտ 70%, իսկ Երևանում՝ մոտ 90 %: Մթնոլորտի աղտոտվածության մեջ ավտոտրանսպորտի բաժնեմասն անհամեմատ մեծ է նաև այն պատճառով, որ ավտոմեքենաների արտանետումներն իրականացվում են գրեթե շնչառության մակարդակում և կուտակվում մթնոլորտի գետնամերձ շերտում քաղաքի ողջ տարածքում:

Ավտոտրանսպորտի արտանետումներից մթնոլորտի աղտոտվածության նվազեցման խնդիրը բարդ է և բազմաբնույթ: Այն առնչվում է տնտեսության տարբեր ոլորտների գործունեությանը: Այդ իսկ պատճառով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից նախ մշակվեց «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման հայեցակարգը», որը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացավ 2004թ. հոկտեմբերի 14-ին N 40 արձանագրային որոշմամբ:

Այնուհետև մշակվեց «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիրը», որը հաստատվեց ՀՀ կառավարության կողմից 2005թ. հուլիսի 14-ին N1033 որոշմամբ:Միջոցառումների ծրագրի մշակմանը զուգահեռ իրականացվեցին մի շարք հրատապ քայլեր: Մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի N902 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N220-Ն որոշմամբ 2007թ. հունվարի 1-ից արգելվեց վնասակար արտանետումների չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն:
- Մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավառության կողմից 2006թ փետրվարի 2-ին ընդունվել է «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին» N 160 –Ն որոշումը:
- Մշակվել և ՀՀ կառավարության կողմից 22.06.2006թ. ընդունվել է «ՀՀ տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների էկոլոգիական անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N965-Ն որոշումը:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ կառավարությունը իր 29.09.2001թ. թիվ 913 որոշմամբ 2001թ-ից արգելել է հանրապետությունում էթիլացված բենզինի արտադրությունը, օգտագործումը և ներմուծումը, ինչը հնարավորություն ստեղծեց ավտոտրանսպորտի արտանետումների չեզոքացուցիչների կիրառման համար:

Հարցը	այո			ոչ	ծանոթագրություններ
	գերազանց	լավ	բավարար		
Գնահատականը	3	2	1	0	
Կայուն տրանսպորտային քաղաքականություն					
Գործողությունների ծրագրի ստորագրման պահից ընդունվե՞լ է արդյոք կայուն տրանսպորտի ազգային քաղաքականություն: Եթե ոչ, ապա մշակվո՞ւմ է այդպիսի քաղաքականություն:	X				- ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 14-ի N 40 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման հայեցակարգը»:
Քաղաքականությունը դիտարկո՞ւմ է արդյոք տրանսպորտի հետ կապված հիմնական բնապահպանական հարցերը (օրինակ, օդի և ջրի աղտոտումը, ազդեցությունը առողջության վրա, միջավայրի օքսիդացումը, կլիմայի փոփոխությունը և այլն):		X			ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեց «Ավտոտրանս-պորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման հայեցակարգը», որը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ 2004թ. հոկտեմբերի 14-ին N 40 արձանագրային որոշմամբ:
Քաղաքականության մշակման մեջ ակտիվ դեր խաղացե՞լ են արդյոք տարբեր ոլորտներում շահագրգիռ անձիք բնապահպանական և այլ ՀԿ-ներ, արդյունաբերությունը և այլն):			X		Հայեցակարգ և գործողությունների ծրագիր մշակող միջգերատեսչական աշխատանքային խմբում ներգրավված էին շահագրգիռ պետական կառույցների ներկայացուցիչներ: Հասարակական սեկտորը գործընթացին չէր մասնակցում:
Արվե՞լ են արդյոք քայլեր երկաթուղիների և ուղևորների ու բեռների խառը ծառայությունների բարելավման և ընդլայնման համար:		X			2008 թ.-ին Հայաստանի երկաթուղու համակարգը 30 տարով կոնցեսիոն կառավարման է հանձնվել «Ռուսաստանի երկաթուղիներ» ՓԲԸ-ին: Վերջինս պարտավորվել է այդ տարիների ընթացքում համակարգում ներդնել շուրջ 174,5 մլրդ.դրամ: Շարժակազմի ձեռք բերման համար ընկերությունը նախատեսել է ներդնել 8 մլրդ դրամ:
իրականացում					
Կիրառվու՞մ է քաղաքականությունը պրակտիկայում			X		
Մատչելի են ֆինանսական ռեսուրսները այդ քաղաքականության իրականացման համար և որքանով էֆեկտիվ դրանք բաշխված :			X		
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Պլանները էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ					
Ընդունվե՞լ է արդյոք պատշաճ ազգային պլան էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ Գործողությունների	X				- էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարությունը ՀՀ կառավարության հավանությունն է ստացել 2005 թ. հունիսին, մինչև ՀՀ ընդգրկումը Եվրոպական հարևա-

ծրագրի ստորագրման պահից: Եթե ոչ, ապա մշակվո՞ւմ է արդյոք այդպիսի պլան:					նության քաղաքականությունում 2006 թ.: - «Էներգիայի խնայողության և վերականգնվող էներգիայի ՀՀ ազգային ծրագիրը» ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2007 թ.:
Եթե այդպիսի պլան գոյություն ունի, ապա պարունակո՞ւմ է այն արդյոք կոնկրետ և չափելի հանձնարա-րություններ-նպատակներ:	**X**				«Էներգիայի խնայողության և վերականգնվող էներգիայի ՀՀ ազգային ծրագրի» 6.1 հոդվածը պարունակում է չափվող հատուկ նպատակներ:
Եթե այդպիսի պլան գոյություն ունի, ապա պարունակո՞ւմ է այն հստակ և իրական ֆինանսական պլան (օրինակ, այն որոշո՞ւմ է արդյոք ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ):	**X**				«Էներգիայի խնայողության և վերականգնվող էներգիայի ՀՀ ազգային ծրագրի» 9-րդ հոդվածում նախատեսված են իրականացման ֆինանսական մեխանիզմներ:
Ակտիվ դեր խաղացե՞լ են արդյոք հասարակական շահագրգիռ դեմքերը (էկոլոգիական /բնապահպանական/ և այլ ՀԿ-ներ, արդյունաբերությանը, այլք) պլանի մշակման գործում:				**X**	Հասարակական սեկտորը գործընթացին չէր մասնակցում:
Արվե՞լ են արդյոք քայլեր ռազմավարությունով նախատեսված միջոցառումների իրականացման համար:		**X**			«Էներգիայի խնայողության և վերականգնվող էներգիայի ՀՀ ազգային ծրագրի» իրականա-ցման Գործողությունների ծրագիրը զարգացման փու-լում է:
Իրականացում					
Կիրառվու՞մ է քաղաքականությունը պրակտիկայում		**X**			
Մատչելի են ֆինանսական ռեսուրսները այդ քաղաքականու-թյան իրականացման համար և որքանով էֆեկտիվ դրանք բաշխված :			**X**		
Երկրին անմիջականորեն վերաբերող հարցեր					
Ընդհանուր գնահատականը: Գնահատականը 0-ից մինչև… (3x հարցերի քանակը):	**24 [0-39]**				
Տոկոս	61,5%				
Մեկնաբանություններ և բացատրություններ					
Էներգետիկայի մասին բազային ինֆորմացիա (Ապագայում հնարավոր համեմատության ժամանակ օգտագործելու համար, որպեսզի գնահատվեն արդյունքները, արդյոք ունեի՞ն էներգաարդյունավետության պլաններ):					
Տվյալ պահին էներգամատա-կարարման ո՞ր մասն է գալիս վերականգնվող աղբյուրներից: Բաժանեք ըստ տարբեր տեխնո-լոգիաների և սեկտորների (որպեսզի խուսափեք հիդրոէներգետիկայի թվերի վրա մեծ ազդեցությունից): Ինֆորմացիան մատչելի է ազգային վիճակագրական աղբյուրներից կամ էլ ՄԱԳԱՏԷ-ի կայքից: Տոկոսներով (գեոթերմալ, արևային, հիդրո և այլն): Տենդենցների վերլուծությունը. վե-					

ռականգնվող աղբյուրների բաժնե-մասի ավելացումը տոկոսներով՝ նախնական (բազային) իրավիճակի համեմատությամբ:	
Ինչպիսի՞ն է ազգային էներգա-տարողությունը, կոնկրետ էներգա-սպառումը: Ինֆորմացիան մատչելի է ազգային վիճակագրական աղբյուրներից կամ էլ ՄԱԳԱՏԷ-ի կայքից: Բացի այդ, ինչպիսի՞ն է ածխաթթու գազի ազգային տարողությունը: CO_2/երկիր, CO_2/ բնակչության մեկ շնչին, CO_2 –/ՀՆԱ (PPP)	էներգիայի օգտագործումը /նաֆթի տոննայի համաչափով/ ՀԱԱ-ի մեկ հազար ԱՄՆ դոլարի համար կազմում էր՝ 1990թ. – 1.34 1999 թ. – 3.9 2004 թ. – 2.5 2005 թ. – 1.7
Ինչպիսի՞ն է ազգային էներգատա-րողությունը և տարողությունը ուրիշ երկրների CO_2 համե-մատությամբ (բա՞րձր, թե ցա՞ծր): Բացի այդ, տենդենցների վերլուծությունը. վերոհիշյալ ցուցանիշների ավելացո՞ւմանկո՞ւմ կա բազային իրավիճակի համեմատությամբ:	

Ցուցանիշներ	2000	2005	2010	2015	2020
ՀՆԱ էներգատարությունը, տն.հ./հազ. ԱՄՆ $	1.02	0.55	0.61	0.70	0.61

Ցուցանիշներ	2000	2005	2010	2015	2020
ՀՆԱ էներգատարությունը, տն.հ./հազ. ԱՄՆ $	1.02	0.55	0.49	0.57	0.49